# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**Հեռակա ուսուցում 1519 թողարկում**

**Կառավարում ամբիոն**

Տնտեսական անվտանգության ապահովման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

**«Կառավարում» մասնագիտությամբ կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար**


Մագիստրանտ՝ Աքելյան Մելս Արմենի

Ղեկավար՝ Թաթուլ Նորայրի Մանասերյան
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ամբիոնի վարիչ՝ Վիլեն Խաչատրյան Վիկտորի
տնտ. թեկնածու, դոցենտ


**ԵՐԵՎԱՆ 2018**

# Բովանդակություն

Ներածություն ........ 3

ԳԼՈՒԽ 1 ........ 5

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ........ 5

ԳԼՈՒԽ 2

2.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՕԲՅԵԿՏՆԵՐԸ, ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

2.2 Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը........ 37

2.3 Տնտեսական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքները........ 40

ԳԼՈՒԽ 3

3.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ........ 47

3.2 Տնտեսական անվտանգության մակարդակի ցուցանիշները........ 50

3.3. ՀՀ տնտեսական անվտանգության առանձնահատկությունները........ 61

ԳԼՈՒԽ 4

4.1 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ........ 67

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ........ 67

4.2 Պետական պարտքը և տնտեսական անվտանգությունը........ 79

4.3 Հարկերը որպես պետության ֆինանսական և տնտեսական անվտանգության գործոններ........ 81

4.4 Ստաբիլիզացիոն ֆոնդի դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում ..90

Եզրակացություն և առաջարկություններ........ 92

Գրականության ցանկ........ 95

# Ներածություն

Զարգացման արդի փուլում գլոբալացման գործընթացը յուրաքանչյուր երկրի առջև ոչ միայն նոր հնարավորություններ և հեռանկարներ է ստեղծում, այլ նաև կարող է նոր վտանգներ, ռիսկեր և ցնցումներ առաջացնել:

Փորձը ցույց է տալիս, որ տնտեսական անվտանգության ապահովման հուսալի և արդյունավետ համակարգը կարող է երաշխիք դառնալ երկրի անկախության և ինքնիշխանության պահպանման, կայուն սոցիալ – տնտեսական զարգացման համար:

Անվտանգության ապահովման, այդ թվում՝ տնտեսական սպառնալիքների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է ոչ միայն խիստ մասնագիտական և քաղաքական միջոցառումների իրականացում, այլև հասարակության մեջ տիրող սոցիալ – հոգեբանական վիճակի փոփոխում և վերակառուցում:

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը, գտնվելով վերափոխումների շրջանում, տնտեսական անվտանգության սպառնալիքների առջև հայտնվել է առավել խոցելի վիճակում: Այս պայմաններում սրվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը:

Տնտեսական անվտանգության ապահովումը երկրի անկախության, ինքնիշխանության գլխավոր երաշխիքն է, հասարակության և անձի կայուն ու արդյունավետ գործունեության պայմանը: Այդ պատճառով տնտեսական անվտանգության ապահովումն ազգային տնտեսության հիմնական գերակայություններից մեկն է:

Ցանկացած պետության տնտեսական անվտանգության համակարգի ձևավորումը նպատակ ունի ապահովել զարգացման ինքնուրույնությունը և անկախությունը, ինչպես նաև ստեղծել համապատասխան մեխանիզմներ՝

չեզոքացնելու և նվազեցնելու երկրին սպառնացող ներքին և արտաքին վտանգները:

Տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարությունը Հայաստանի Հանրապետության համար կարևորվում է հիմնականում այն պատճառով, որ միջազգային տնտեսական հարաբերություններում մեր երկիրը զերծ չէ տարբեր տեսակի ճնշումներից և զգում է իր խոցելիությունը կանխամտածված գործողություններից, որոնք սահմանափակում են երկրի տնտեսական ինքնուրույնությունը և ինքնիշխանությունը:

Հրատապ են դարձել տնտեսական անվտանգության հասկացության, հայեցակարգային հիմնադրույթների քննարկումը, տնտեսական անվտանգության բնութագրումը ազգային անվտանգության համակարգում, տնտեսական անվտանգության գնահատման ցուցանիշների համակարգի մշակումը և մոնիթորինգը:

# ԳԼՈՒԽ 1

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական անվտանգության ամենաընդհանուր դրույթը, որ բնորոշ է համարյա բոլոր երկրների ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգին, դա «տնտեսական օրգանիզմի» արտաքին և ներքին ազդեցությունների հանդեպ կայունության սկզբունքն է, ինչպես նաև զարգացման գործընթացում փոփոխվող պայմաններին արագ ու արդյունավետ համակերպվելու տնտեսության կարողությունը: Այդ ընդհանուր սկզբունքը նախատեսում է տնտեսության կարողությունը ապահովելու բնակչության բարեկեցության բավականաչափ մակարդակ, ինչին կարելի է հասնել առաջին հերթին արտադրողական ռեսուրսների սկողության ոլորտում ազգային անկախության, տնտեսական քաղաքականության մշակման և կենսագործման ոլորտում անկախություն պահպանելու հիմքի վրա:

Մյուս կողմից, կայունությունը կարելի է դիտարկել որպես տնտեսության բաղադրիչների, համակարգի ներսում ուղղահայաց և հորիզոնական և այլ կապերի ամրություն և հուսալիություն, ներքին և արտաքին «ճնշումները» դիմակայելու ունակություն: Կայունությունը և անվտանգությունը տնտեսության՝ որպես ամբողջական համակարգի կարևորագույն հատկանիշներն են: Դրանք մեկը մյուսին հակադրելը նպատակահարմար չէ, քանզի յուրաքանչյուրը յուրովի է ներկայացնում տնտեսության վիճակը: Անվտանգությունը որևէ կառույցի կամ օբյեկտի վիճակն է այլ օբյեկտների հետ ունեցած հարաբերություններում՝ ներքին և արտաքին սպառնալիքների պայմաններում գոյատևելու և զարգանալու ունակությունը, ինչպես նաև անկանխատեսելի և դժվար կանխատեսելի գործոնների գործունեության տեսանկյունից:

Որքան ամուր են տնտեսական հարաբերությունները, արտադրական, ֆինանսաբանկային և այլ կապիտալների փոխհարաբերությունները, այնքան ավելի կենսունակ է տնտեսությունը, հետևաբար, ավելի բարձր է դրա անվտանգության

ատիճանը: Համակարգի տարբեր բաղադրիչների միջև համամասնությունների և կապերի ցանկացած խախտում հանգեցնում է ապակայունացման և յուրատեսակ նախանշան է տնտեսության անվտանգից՝ վտանգված վիճակին անցման համար:

Բնականաբար, անվտանգությունը ներքին և արտաքին սպառնալիքներից կենսական կարևորության շահերի որոշակի պաշտպանվածության վիճակն է, որը նաև ապահովում է անհատի, հասարակության և պետության առաջընթաց զարգացումը: Հետևաբար, տնտեսական անվտանգությունն ազգային տնտեսության կայուն վիճակ է, որը ապահովում է հասարակական պահանջմունքների արդյունավետ բավարարում, տեխնիկատնտեսական անկախություն, ներքին և արտաքին սպառնալիքների և ազդեցությունների հանդեպ երկրի անխոցելիությունը և պետության մարտավարական նպատակների և դրանց համապատասխան ներքին ու արտաքին սպառնալիքների և ազդեցությունների փոփոխություններից անկախ ներքին և արտաքին շուկաներում երկրի տնտեսական շահերի պաշտպանությունը:

Ընդսմին, ներկայումս աշխարհում տնտեսական անվտանգության հասկացության մեջ բացակայում է միասնական մոտեցումը: Տարբեր են ոչ միայն երկրների, այլև միջազգային կազմակերպությունների պատկերացումները, մոտեցումները և ձևակերպումները: Միաժամանակ, փորձեր են արվում անգամ հաշվարկել գործակիցներ, ցուցիչներ, որոնք կարտացոլեն տվյալ կառույցների պատկերացումները տնտեսական անվտանգության վերաբերյալ:

Հաշվի առնելով զարգացած և զարգացող երկրներում գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական առաջնահերթությունների համակարգերը, կարելի է փաստել, որ տնտեսական անվտանգության բուն հասկացությունը բավականին հարաբերական է: ԱՄՆ 32 րդ Նախագահ Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի կողմից ներկայացված տնտեսական անվտանգության հայեցակետն, օրինակ, որով առ այսօր առաջնորդ վում է ամերիկյան կառավարությունը, քիչ առնչություն ունի Ռուսաստանի օրինակով ակադեմիկոս Սերգեյ Գլազևի մշակած տնտեսական անվտանգության ցուցանիշների

սահմանային մեծությունների հանրահայտ աղյուսակի հետ: Ուկրաինացի վերլուծաբան Տատյանա Սիլինան «անվտանգություն» հասկացությունը համեմատում է «երջանկություն» հասկացության հետ. «մարդիկ երջանիկ են այն պատճառով, որ չգիտեն, թե որքան են դժբախտ»: Ամեն ինչ կախված է կոորդինատների այն համակարգից, որտեղ տեղավոված է հասարակությունը: Կարելի է տանը պարփակվելով, օրինակ, չմիացնել հեռուստացույցը, թերթ չկարդալ, չմտնել համացանց և լիովին անվտանգության մեջ զգալ: Կարելի է կարդալ միայն այն պարբերականները, որոնք լավատեսորեն գրում են, որ ՀՆԱ-ն բարձրացել է և դրա հետ մեկտեղ գտնվել բերկրալի սպասման մեջ, որ ուր որ է կստացվի հերթական վարկը: Բայց կարելի է կարդալ այլ թերթեր, որոնք փաստում են այն մասին, որ ՀՆԱ ն մի քանի անգամ պակաս է զարգացած երկրների ՀՆԱ ից, որ երկրի արտաքին պարտքը մոտեցել է վտանգավոր սահմանագծին և մտահոգվել ապագայի նկատմամբ վախից: Ամեն ինչ կախված է այսպես կոչված չափանիշների և չափորոշիչների համակարգից, ինչպես նաև՝ տնտեսական անվտանգության անաչառ գնահատականից: Բայց, ինչպես հայտնի է, անկախության տարիների ընթացքում հանրապետությունում պետական մակարդակով այդպես էլ չկառուցվեց նման համակարգ, որով հնարավոր կլիներ որոշել պետության տնտեսական անվտանգությունը:

Ինչպես կարելի է իմանալ՝ անվտանգ է երկիրն արդյոք, և ինչպես չեզոքացնել սպառնալիքները, եթե մինչև հիմա ոչ մի տեղ պաշտոնապես չի արձանագրված, թե որոնք են ներկայիս սպառնալիքները և ինչպես գնահատել անվտանգությունը:

Արևմուտքի արդյունաբերական զարգացած երկրներում տնտեսական անվտանգություն հասկացությունը, որպես իր կարևորագույն առարկայական և աճանցյալ չափանիշ, ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և դրա ճյուղերի մրցունակությունը, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներում և զարգացումներում ապահովում է երկրի ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Շուկայական մրցակցության պայմաններում գործող, աշխատանքի միջազգային բաժանման մասնակից ազատական տնտեսությունների համար

տնտեսական անվտանգությունը փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացքի ռիսկերին և վտանգներին համապատասխանաբար արձագանքելուն: Այս առումով արևմտյան երկրների տնտեսագիտական գրականությանում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը գործածվում է հազվադեպ և գրեթե չի ուսումնասիրվում խորությամբ: Առանձին երկրների օրինակով տնտեսական անվտանգության ապահովման փորձերն արծարծվում են սույն ուսումնասիրության խնդրո առարկա այլ ենթաբաժիններում:

ԱՄՆ ի տնտեսական անվտանգության ժամանակակից հայեցակարգը ձևավորվել է «սառը պատերազմին» հաջորդած ժամանակաշրջանում: Այն կառուցվում է այն գաղափարի վրա, որ ինչքան միջազգային գործերում նվազում է ռազմավարական գործոնների նշանակությունը, այնքան առաջնային է դառնում երկրի տնտեսական հզորությունը, նրա դերը համաշխարհային տնտեսական համակարգում: Ամենաընդհանուր տեսքով այս հայեցակարգն ուղղված է դեպի ամերիկյան տնտեսական ներուժի պահպանմանն ու բազմապատկմանը, որպես աշխարհում իր ռազմավարական դիրքերի պահպանման հիմունք: Այս քաղաքականության հիմնական նպատակներն են ամերիկյան արտահանման մակարդակի աճն ու ներքին շուկայում մրցակցությանը դիմակայելու կարողության ապահովումը:

Գերմանիայի տնտեսական անվտանգության պետական փիլիսոփայությունը սոցիալական գործընկերության պաշտոնական դոկտրինայի շրջանակներում հիմնված է երկրի բնակչության սոցիալ տնտեսական շահերի անպայման պաշտպանության սկզբունքի վրա: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ձևավորված է նաև այն ըմբռնումը, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տնտեսական և սոցիալ քաղաքական իրադրությունը մի գործոն է, որն ունի առավել անմիջական առնչություն Գերմանիայի տնտեսական անվտանգության հետ:

Չինաստանում ազգային տնտեսական անվտանգությունը դիտվում է որպես պետական անվտանգության ընդհանուր համակարգի մի մաս, այդ պատճառով «Պետական

գաղտնիքի պահպանման մասին» Չինաստանի Ժողովրդական Հանրապետության օրենքով ժողովրդական տնտեսությանն ու սոցիալական զարգացմանը վերաբերող տվյալները երկրի պետական գաղտնիք են հանդիսանում:

Ճապոնիայում «տնտեսական անվտանգություն» հասկացությունը չի առանձնացվում որպես ինքնուրույն, այլ դիտվում է որպես ավելի լայն հասկացության՝ «կոմպլեքսային ազգային անվտանգության» կարևոր բաղկացուցիչ մաս: «Կոմպլեքսային ազգային անվտանգությունը» սահմանվում է որպես «պետության այն ջանքերը, որոնք ներառում են արտաքին հարաբերությունների ոլորտներ, տնտեսության, ռազմական գործի և այլ գործունեության ոլորտներ և ուղղված են ազգային անվտանգությունը բազմազան արտաքին վտանգներից պաշտպանելուն»:

Ռուսաստանում տնտեսական անվտանգության հայեցակարգը հաստատված է և կիրարկվում է համաձայն Ռուսաստանի Դաշնության նախագահի 1996թ. «Ռուսաստանի Դաշնության տնտեսական անվտանգության պետական ռազմավարություն» (հիմնական դրույթներ) հրամանագրի:

Հատկանշական է, որ այս բնագավառի փորձագետների կողմից տրված տարբեր ձևակերպումները մի բանում ընդհանուր են. բոլորն էլ գնահատում են այն որպես որոշակի հնարավորություն, ունակություն կամ կարողություն, իսկ տնտեսական անվտանգության ապահովումը՝ որպես գործառույթ, որը բացառապես վերագրվում է պետությանը:

Հետխորհրդային երկրներից, անկասկած այս բնագավառում էական ձեռքբերում կարելի է համարել Ռուսաստանում տնտեսական անվտանգության՝ որպես տնտեսագիտության առանձին ճյուղի կայացումը: Ռուս տնտեսագետներից պրոֆ. Լ.Աբալկինը գտնում է, որ տնտեսական անվտանգությունը պայմանների և գործոնների մի ամբողջություն է, որն ապահովում է ազգային տնտեսության անկախությունը, կայունությունը և մշտապես նորացման ու կատարելագործման ունակությունը: Մեկ այլ փորձագետի՝ Ե.Բուխվալդի համոզմամբ անվտանգությունը տնտեսության կողմից ազգային և միջազգային մակարդակներում հասարակության պահանջմունքների

արդյունավետ բավարարման ապահովման կարողությունն է: Իսկ Ի.Խակամադան գտնում է, որ տնտեսական անվտանգությունն իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, կառուցվածքային, կազմակերպական և տեխնոլոգիական այնպիսի պայմանների ապահովում, որոնք համապատասխանում են 20 րդ դարի վերջի և 21 րդ դարի սկզբի մարտահրավերներին՝ պահպանելու և արդյունավետ օգտագործելու բնական ռեսուրսները, արտադրողական ուժերը, հատկապես մտավոր սեփականությունը, մարդկային ռեսուրսները, հիմնարար գիտությունը՝ որպես նպատակ ունենալով սեփական երկրի վերածնունդը: Տնտեսական անվտանգության ռուսական դպրոցի ներկայացուցիչների մոտեցումները համառոտ ներկայացված է ստորև բերված աղյուսակ 1.1. ում:

Ընդհանուր առմամբ, տնտեսական անվտանգության էությունը կարելի է բնութագրել որպես տնտեսության և իշխանության օղակների այն պիսի վիճակ, որի դեպքում երաշխավորված է ազգային շահերի պաշտպանությունը, քաղաքականության սոցիալական ուղղվածությունը, պաշտպանության համակարգի բավարար կարողությունն՝ անգամ ներքին և արտաքին գործընթացների զարգացման անբարենպաստ պայմանների պարագայում: Այլ խոսքով, տնտեսական անվտանգությունն ազգային շահերի պաշտպանվածությունն է, այսինքն՝ իշխանության մարմինների կարողությունը՝ ստեղծելու ազգային տնտեսության զարգացման շահերի իրացման և պաշտպանության, հասարակության սոցիալ քաղաքական կայունության գործուն մեխանիզմներ:

Տնտեսական անվտանգությունը տնտեսության և իշխանության ինստիտուտների այնպիսի իրավիճակն է, որի դեպքում ապահովվում են՝ ազգային շահերի երաշխավորված պաշտպանությունը, երկրի սոցիալական ուղղվածությամբ զարգացումը՝ ընդհանուր առմամբ, բավարար պաշտպանական պոտենցիալը:

Տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել որպես ազգային տնտեսության վիճակ, որը հնարավորություն ունի ապահովվելու՝ հասարակական պահանջմունքների արդյունավետ բավարարումը՝ պետության սոցիալ քաղաքական և ռազմական

կայունության բավարար մակարդակի վրա պահելու պայմանով, արտաքին և ներքին սպառնալիքներից երկրի տեխնիկատնտեսական անկախությունը և անխոցելիությունը, Ռուսաստանի տնտեսական շահերի պաշտպանությունը՝ անկախ ներքին և արտաքին շուկաներում պետության մարտավարական նպատակների փոփոխությունից, և դրանց համապատասխան ներքին և արտաքին սպառնալիքների և ազդեցությունների փոփոխությունից Ռուսաստանի ազգային անվտանգության հայեցակարգը: Տնտեսական անվտանգությունը մի վիճակ է, որում ազգը (պետության դեմքով) կարող է ինքնուրույն, առանց արտաքին ճնշման և ազդեցության, որոշել իր տնտեսական զարգացման ճանապարհները և ձևերը:

Տնտեսական անվտանգությունը տնտեսության հնարավորությունը և պատրաստվածությունն է ապահովելու անձի արժանապատիվ կյանքի և զարգացման պայմանները, հասարակության և պետության սոցիալ տնտեսական և ռազմաքաղաքական կայունությունը, հակազդեցությունը արտաքին և ներքին սպառնալիքներին:

Տնտեսական անվտանգությունը դրսևորվում է ՌԴ տնտեսական զարգացման ապահովման մեջ՝ ՌԴ քաղաքացի ների սոցիալական և տնտեսական պահանջմունքների բավարարման նպատակով՝ աշխատանքի օպտիմալ ծախսման և հումքային ռեսուրսների ու շրջակա միջավայրի բնապահպանորեն օգտագործման պայմաններում:

Տնտեսական անվտանգությունը մի հասկացություն է, որը բնութագրում է տնտեսության կայուն հնարավորությունը վերարտադրելու և զարգացնելու էթնոսոցիալական ընդհանրությունների կողմից տրված նյութական արժեքները Ամենաընդհանուր տեսքով տնտեսական անվտանգությունն աձանցյալ վիճակում է տնտեսական բարեփոխումների հիմնախնդիրներից՝ դրանց հանգուցալուծման, ինչպես նաև հասարակության զարգացման յուրաքանչյուր փուլում: Տնտեսական անվտանգության առավել ընդհանրական հիմնադրույթներից մեկը, որը բնորոշ է գրեթե բոլոր երկրների ազգային տնտեսական անվտանգության հայեցակարգերին, արտաքին և ներքին

ազդեցություններին տնտեսության դիմադրողականության աստիճանն է, ինչպես նաև զարգացման փոփոխվող պայմաններին արագ և արդյունավետ հարմարվելու ունակությունը: Այս սկզբունքը ենթադրում է նաև տնտեսության կողմից ազգաբնակչության բարեկեցության բավարար մակարդակի ապահովման կարողություն, որին կարելի է հասնել, նախ և առաջ, արտադրական ռեսուրսների ասպարեզում ազգային անկախության ձեռքբերմամբ, տնտեսական քաղաքականության մշակմամբ և իրականացմամբ, ինքնուրույնության պահպանմամբ:

Տնտեսական անվտանգությունը զարգացման տարբեր մակարդակ ներում գտնվող յուրաքանչյուր երկրի համար ունի տարբեր իմաստ, որը պայմանավորված է պետության առջև դրված խնդիրների բնույթով և ազգային տնտեսության զարգացման որոշակի շահերով: Այսպես՝ օրինակ, ԱՄՆ ի, Կանադայի, Արևմտյան Եվրոպայի, արդյունաբերական զարգացած երկրներից շատերի համար տնտեսական անվտանգության մեկնաբանությունը խիստ տարբերվում է նախկին խորհրդային հանրապետությունների համար օրինաչափ համարվող ձևակերպումներից:

Եթե զարգացած յոթնյակի որևէ երկրի համար տնտեսական անվտան գությունը առավելագույն կենսամակարդակի ապահովումն է և յուրաքանչյուր անհատի համար սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու սոցիալական արդարության երաշխիքները, ապա նորանկախ պետություններից շատերի համար գերխնդիր է բնակչության նվազագույն կենսամակարդակի, տարրական պայմանների ապահովումը, աղքատության դեմ պայքարը, սովի և համաճարակների վերացումը և այլն: Ավելին, գրեթե նույն հարթության վրա հայտնված զարգացող որոշ երկրների համար տնտեսական մի շարք սպառնալիքներ նման օրինակ այլ երկրներում օրակարգից դուրս են: Այսպես՝ օրինակ, եթե մտավոր կարողության արտահոսքը Հայաստանից խիստ բացասական նշանակություն ունի ազգային տնտեսության ձևավորման և զարգացման հեռանկարների վրա, ապա Ռուսաստանում կամ Ուկրաինայում աշխատունակ բնակչության ընդհանուր թվի համեմատ որակյալ մաս նագետների արտահոսքի տեսակարար կշիռը մտահոգիչ

երևույթ չի համարվում և ընդհանրապես չի հիշատակվում տնտեսական սպառնալիքների համակարգում: Տվյալ դեպքում, Հայաստանի տնտեսական անվտանգության հիմնահարցերը վերլուծելիս ևս անհրաժեշտ է տարբերակել տնտեսական անվտանգությունն ապահովող ներտնտեսական և արտաքին տնտեսական գործոնները: Իրենց հերթին, ներտնտեսական գործոնները պայմանականորեն կարելի է դասակարգել ըստ անհատի, ձեռնարկության և հասարակության կամ պետության տնտեսական անվտանգությունը կանխորոշող միկրո և մակրո տնտեսական գործոնների:

Տնտեսական անվտանգության հնարավոր սպառնալիքների բացահայտումը և դրանց վնասազերծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումն առաջնահերթ նշանակություն ունի երկրի տնտեսական անվտանգության ապահովման համար:

Հայաստանի պարագայում, մեր կարծիքով, տնտեսական անվտանգությունը կարելի է դիտարկել որպես երկարաժամկետ (մոտ 10 15 տարի հնարավոր տևողությամբ), անցումային շրջանի քաղաքականությունը բնութագրող առանձնահատկություններիցածանցյալ հասկացություն: Այն ենթադրում է տնտեսության բազմակացութաձևության՝ պետական, շուկայական, խառը հատվածների պահպանում, ընդ որում չբացառելով այդ հատվածներից յուրաքանչյուրի կողմից մրցակցության մեթոդներին փոխազդելու տարբեր աստիճաններ և դրանց համապատասխան տնտեսական շահերի պաշտպանության և անվտանգության տարբեր մակարդակներ ու ձևեր:

Հայաստանի տնտեսական անվտանգությունը նաև տնտեսական քաղաքականության արդյունավետ իրագործումն է՝ ապահովելու տնտեսության կայուն աճ, հստակ ձևավորված ճյուղային կառուցվածք և արտաքին ազդեցությունների անբարենպաստ պայմաններում համաշխարհային տնտեսության հետ ազգային տնտեսության աստիճանական մերձեցման կարողություն:

Տնտեսական անվտանգություն հասկացությունը, որպես իր կարևորագույն առարկայական և ածանցյալ չափանիշ, ենթադրում է համաշխարհային շուկայում

ազգային տնտեսության և դրա ճյուղերի մրցունակությունը, որը համաշխարհային տնտեսության բազմաբնույթ միտումներում և զարգացումներում ապահովում է երկրի ազատ շուկայական տնտեսության կենսունակությունը: Շուկայական մրցակցության պայմաններում գործող, աշխատանքի միջազգային բաժանման մասնակից ազատական տնտեսությունների համար տնտեսական անվտան գությունը փաստացի հանգում է այդ մրցակցության ընթացիկ ռիսկերին և վտանգներին համապատասխանաբար արձագանքելուն:

Այսպիսով, անվտանգության սպառնալիքն առաջանում է ոչ միայն այն դեպքում, երբ քաղաքական առևտրի հետևանքով կառավարություն են գալիս մարդիկ, որոնցից ամեն մեկը պաշտպանում է իր խմբի շահերը և կառավարությունում դժվարություններ են առաջանում արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրագործելու հարցում: Սպառնալիքն առկա է նաև այն դեպքում, երբ երկրում պարզապես չկա մի միասնական մոտեցում և քաղաքական կամք՝ ձևակերպելու սպառնալիքների բոլոր չափորոշիչները և վերլուծելու իշխանության գործողությունների արդյունավետությունը, հետևելու, թե ով է նախաձեռնում այս կամ այն օրենքի նախագիծը, ով է զբաղվում դրա լոբբինգով և ով պետք է, վերջին հաշվով, պատասխանատվություն կրի տնտեսության տարբեր ոլորտներում արձանագրվող ձախողումների, ուղեգծի տապալումների և երկրի տնտեսական անվտանգության սպառնալիքների աճի համար:

Ավելին, համապատասխան քաղաքական կամքի բացակայության պայմաններում նման մոտեցումն անգամ պահանջարկված չէ: Տնտեսական անվտանգության ամբողջական համակարգի ստեղծման ուղղությամբ մեր կողմից արդեն վաղուց աշխատանքներ են տարվում, սակայն համապատասխան նորմատիվային հիմք մինչև հիմա չկա: Մինչև հիմա շարունակվում են բանավեճերը նաև այն մասին, թե ո՞ր չափանիշները պետք է դառնան չափորոշիչներ և ի՞նչ սահմանային արժեքներ պետք է ունենան դրանք երկրի և անհատի համար: Պարզ է, որ սահմանային արժեքների մասին առայժմ ոչինչ չի ամրագրված ՀՀ կառավարության և ՀՀ Ազգային ժողովի կիրառվող փաստաթղթերում: Օրինակ,

յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի բանաձևի ընդունման ժամանակ ոչինչ չի ասվում պետական պարտքի չափի սահմանային արժեքի մասին՝ տնտեսական անվտանգության տեսանկյունից: Ի դեպ, եթե վերցնենք գիտական չափորոշիչները, ապա, մենք վաղուց «անցել ենք» մի շարք երկրներից և արդեն գերազանցել ենք տնտեսական անվտանգության ցուցանիշների մեծ մասի սահմանային արժեքները:

Տնտեսական անվտանգության սպառնալիքները ներթափանցել են տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, էական ազդեցություն են գործել մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների վրա: Իրականացվող տնտեսական քաղաքականությունը, որը հանգեցրել է արտադրության անկման, կառուցվածքային վերափոխման բացակայությունը լրջորեն խոչընդոտում է բնականոն զարգացմանը, քայքայում է ազգային անվտանգության հիմքերը:

Ամենաընդհանուր տեսքով երկրի տնտեսական անվտանգության սպառնալիքներից կարելի է հիշատակել հայրենական արտադրանքի անմրցունակությունը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ ի ցուցանիշի անթույլատրելիորեն ցածր մակարդակը (ԱՀԾ տվյալների համաձայն Հայաստանը 139 րդ տեղում է՝ մեկ շնչին բաժին ընկնող 5,800 դոլար ցուցանիշով), սոցիալական դժգոհության նոր ալիքի բարձրացման, երկրի գիտական ներուժի նվազման մասին, և իհարկե, որոշակիորեն կայացած էներգետիկ համակարգի արտաքին կախվածության մասին, որը համարվում է ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության հիմնական սպառնալիքներից մեկը:

Հայաստանի տնտեսական անվտանգությանն առնչվող սպառնալիքները: Դրանք կարելի է պայմանականորեն ներառել հետևյալ հիմնական ասպարեզներում.

- հանրապետության ֆինանսավարկային հիմնարկների որոշակի մեկուսացում՝ տնտեսության իրական հատվածից;
- չձևավորված արժեթղթերի շուկա;
- երկրի սոցիալ տնտեսական զարգացման կառավարման տեղեկատվական և հեռահաղորդակցությունների ասպարեզներ;

- տնտեսական կառույցների անարդյունավետ արտաքին տնտեսական գործունեություն;
- սոցիալական և տնտեսական զարգացման պետական ծրագրերի իրագործման գործընթացներ;
- տնտեսության կառուցվածքային բարեփոխումներ. սեփականության ձևերի փոփոխություններ;
- պետական սեփականության կառավարում;
- ստվերային բիզնես և դրա մենեջմենթ. թմրանյութերի, զենքի և զինամթերքի, ռազմավարական նշանակության հումքի և նյութերի, թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի, երկրի պատմամշակութային ժառանգությունը կազմող առարկաների ներքին և արտաքին անօրինական շրջանառություն:

Հիշատակված և դրանցից ածանցյալ բազմաթիվ երևույթներն, ընդհանուր առմամբ, իրենցից ներկայացնում են տնտեսական անվտանգությանն ու կայուն զարգացմանը սպառնացող վտանգներ, որոնք իրենց բնույթով կարող են տարբեր լինել: Մասնավորապես, սպառնալիքները տարբեր ուղղվածություն ունեն և կարող են հանգեցնել իրենց նշանակությամբ և ծավալներով ոչ միօրինակ հետևանքների: Սպառնալիքների համակարգը մշտապես նույնը չի մնում. սպառնալիքները կարող են հայտնվել և վերանալ, ավելանալ կամ նվազել: Տնտեսական սպառնալիքներ ասելով, թերևս, պետք է հասկանալ հնարավոր կամ իրականում գոյություն ունեցող ազդեցություններ, որոնք, ի վերջո, հանգեցնում են այս կամ այն նյութական վնասին: Դրանք կարելի է դա սակարգել հետևյալ հատկանիշներով.

- ըստ ծագման և իրացման՝ երևակայական, հավանական, խիստ հավանական և իրական,
- ըստ աղբյուրների տեղակայման՝ արտաքին և ներքին,
- ըստ հետևանքների՝ համընդհանուր, տեղական նշանակության, միկրոտնտեսական, տարածաշրջանային և ճյուղային, մակրոտնտեսական,

- ըստ տեսակային հատկանիշների՝ արտադրական ոլորտում, արտաքին տնտեսական ոլորտում, ֆինանսավարկային, ներդրումային համակարգերում, արժեթղթերի շուկայում, սեփականության կառավարման, գիտական և մտավոր կարողության ոլորտներում,
- ըստ պատճառած վնասի չափի՝ ծայրահեղ, էական, աննշան,
- ըստ ծագման պատճառների՝ տարերային աղետներ, կանխամտածված ազդեցություն, ստվերային տնտեսության գործողություններ,
- ըստ հասցված վնասի բնույթի՝ նյութական, ֆինանսական, տեղեկատվական, բարոյական,
- ըստ ազդեցության բնույթի՝ ակտիվ և պասիվ:

Գործնականում Հայաստանի տնտեսական անվտանգության ամենահավանական սպառնալիքները, որոնց վնասազերծմանը պետք է ուղղված լինի պետական իշխանության մարմինների գործունեությունը, ներքին և արտաքին վտանգներն են:

Հայաստանի տնտեսությունում բարեփոխումների փուլում առաջացած և տնտեսական անվտանգությանը սպառնացող ներքին հիմնական սպառնալիքներն են՝

- զարգացման կողմնորոշիչների բացակայությունը,
- տնտեսության կառավարման համակարգի ծայր աստիճան քաղաքականացվածությունը (կուսակցականացվածությունը),
- կոռուպցիան և կաշառակերությունը,
- ծայր աստիճան աղքատությունն ու ազգաբնակչության մեծ մասի անվճարունակությունը,
- «ուղեղների» արտահոսքը,
- տնտեսության կառուցվածքային ճնախախտման ուժեղացումը,
- հայրենական արտադրանքի մրցունակության ցածր մակարդակը,
- ընդլայնված վերարտադրության պայմանակարգում տնտեսության գործելու անկարողությունը,

- բնակչության սպառման և ապրանքների արտադրության միջև անհավասարակշռությունը, որը փոխհատուցվում է սպառողական ներկրման շնորհիվ,
- ներդրումային և նորամուծական աշխուժության նվազում, գիտական և տեխնոլոգիական ներուժի քայքայումը,
- տնտեսության տարբեր ճյուղերում փաստացի մենաշնորհի գոյության բարձր տեսակարար կշիռը,
- արտադրության արդյունավետության բարձրացման խթանիչ շարժառիթների բացակայությունը,
- պետական պարտքի աճը,
- գնաճի բարձր տեմպերը կամ արհեստականորեն կայունացված փոխարժեքները,
- երկրի վճարունակության համակարգի քայքայումը,
- հանրապետության մարզերի տնտեսական զարգացման անհամաչափության խորացումը,
- հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը,
- «ստվերային» տնտեսության աճը,
- պետական վերահսկողության համակարգի թուլացում:

Ինչ վերաբերվում է արտաքին սպառնալիքներին, ապա դրանց թվին կարելի է դասել՝

- տրանսպորտային շրջափակումը,
- Առևտրի համաշխարհային կազմակերպության առջև պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ միջոցառումների բացակայությունը,
- տնտեսության ներսում արտաքին ընկերությունների մենաշնորհների և արտաքին կախվածության ավելացումը,
- երկրի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման արտաքին կախվածությունը,
- միջազգային հանրության հետ արտաքին առևտրում խտրականության դրսևորումներ,

- ներկրումների նկատմամբ հակումների ուժեղացումը և կախվածությունը ներմուծումից,
- արտաքին պարտքի աճը, դրա սպասարկման համար պահանջվող միջոցների կրճատումը,
- արտարժույթի արտահոսքը երկրից,
- տնտեսության դոլարացման բարձր մակարդակը:

Ներքին և արտաքին սպառնալիքների համադրումը վկայում է, որ հանրապետության համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ (օրինակ՝ արտաքին պարտքի ավելացումը, մերձավոր արտերկրի հետ արտաքին առևտրային շրջանառության ծավալների կրճատումը և այլն) բխում են ներքին պատճառներից. տնտեսության ցածր արդյունավետություն, վերամշակող ճյուղերի ցածր մրցունակություն և հարակից գործոններ:

Անկախության հռչակումից հետո հանրապետության տնտեսության իրավիճակի վերլուծությունները, ինչպես նաև նմանօրինակ իրավիճակներում հայտնված անցումային այլ տնտեսություններում կուտակած ուսանելի փորձի որոշ կողմեր թույլ են տալիս եզրակացնելու, որ երկրի տնտեսական անվտանգության ամենաէական սպառնալիքներն ավելի ամբողջական տեսքով, հետևյալներն են. հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացում, սոցիալական անդորրի և ազգային համաձայնության հիմքերի խարխլում, այդ թվում՝ ազգաբնակչության գույքային անհավասարության և հասարակության բևեռացման մակարդակի և աղքատության ավելացում, որը հանգեցնում է սոցիալական անդորրի և հանրային

համաձայնության խաթարման: Հանրային շահերի ձեռք բերված հարաբերական հավասարակշռությունը կարող է խախտվել հետևյալ հիմնական գործոնների գործողության պատճառով՝ հասարակության բևեռացում՝ մի խումբ հարուստների և աղքատների մեծ զանգվածի, սոցիալական տարբեր հակամարտությունների հանգեցնող գործազրկության աճ, աշխատավարձի ուշացումներ, ձեռնարկությունների աշխատանքի

դադարեցում, հասարակության շերտավորումը մի նեղ խումբ հարուստների և իրենց ապագայում ոչ մի հույս չունեցող աղքատ մարդկանց գերակշռող զանգվածի, գյուղի համեմատ քաղաքային բնակչության շրջանում աղքատների տեսակարար կշռի ավելացում, որն, իր հերթին, ստեղծում է քրեածին մթնոլորտ, սոցիալական լարվածություն և պարարտ հող՝ Հայաստանի համար նախկինում խորթ այնպիսի բացասական երևույթների տարածման համար, ինչպիսիք են թմրաբիզնեսը, կազմակերպված հանցագործությունները, մարմնավաճառությունը և այլն, զանգվածային արտագաղթ դեպի Ռուսաստան և հեռավոր արտերկիր, մտավոր կարողության արտահոսք:

Հայաստանի տնտեսության կառուցվածքի արհեստական և պարտադրված վերաձևումներ, որոնք պայմանավորված են հետևյալ հիմնական գործոններով՝ տնտեսության հանքահումքային արտադրությունների զարգացում, այդ թվում՝ մոլիբդենի, ոսկու սահմանափակ պաշարների արդյունահանում և զանգվածային արտահանում երկրից, վերամշակող արդյունաբերության կենսական կարևորության ճյուղերի արտադրությունների կանգնեցումը և դրանց արտադրատեխնոլոգիական կարողության փոշիացումը, երկրի արդյունաբերական կարողության աստիճանական փոշիացում և շեղում ավանդական մասնագիտացման ճյուղերից, հայրենական արտադրության լայն սպառման ապրանքների մեծ մասի մրցունակության բացակայություն, ժամանակակից տեխնոլոգիաների մշակման և արտադրության, մեքենաշինության, այլ ճյուղերի զարգացման ճանապարհին առկա օրինաչափ և արհեստածին արգելքներ և պետական աջակցության բացակայություն, գիտական հետազոտությունների և նորամուծությունների տեխնոլոգիական միասնության, ինչպես նաև ձևավորված գիտական խմբերի ու հիմնարկների քայքայում և դրանց հիման վրա հանրապետության գիտատեխնիկական կարողության փոշիացում, արտասահմանյան մի շարք երկրների և խոշոր ընկերությունների կողմից լայն սպառման ապրանքների գծով տեղական շուկայի գրավում, արտերկրի խոշոր ընկերությունների կողմից հայրենական արտադրությունների աստիճանական գրավում, նպատակ ունենալով դրանց արտադրանքի դուրս մղումը

արտաքին, հետագայում նաև՝ ներքին շուկաներից (օրինակ՝ Երևանի Կոնյակի գործարանը), բաշխիչ էլեկտրացանցերի օտարում արտերկրի՝ ԱՊՀ մի շարք երկրներում իրենց բացասական դրսևորած ընկերությունների, հետագայում ՀԲ ի պարտադրանքով նախատեսելով նաև էլեկտրաէներգիա արտադրող կայանների սեփականաշնորհումը և տնտեսության իրական հատվածի ամբողջական կազմալուծումը (Ղազախստանի և Վրաստանի օրինակով), արտահանման համեմատ ներմուծումների անընդհատ աճ, Հայաստանի արտաքին պարտքի շեշտակի ավելացում, երկրի պետական բյուջեի ճեղքվածքի խրոնիկական աճ և դրա ֆինանսավորման մեջ արտաքին աղբյուրներից կախվածության ակնհայտ ավելացում, հանրապետության մարզերի սոցիալ տնտեսական անհամաչափության խորացում, որն արտահայտվում է հետևյալ երևույթներում՝ մարզերի սոցիալ տնտեսական զարգացման մակարդակներում գոյություն ունեցող էական տարբերություններում, արդյունաբերությունում կառուցվածքային տեղաշարժեր և արդյունահանող վերամշակող ճյուղերում առաջընթաց արձանագրած մարզերի համեմատ տնտեսական հետամնաց վիճակում գտնվող համայնքների փաստացի անկարողության մեջ, հանրապետության առանձին մարզերի և բնակավայրերի, դրանց ձեռնարկությունների արտադրատեխնոլոգիական կապերի խախտումներում, հանրապետության տարբեր մարզերի միջև բնակչության մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի արտադրության մակարդակներում եղած տարբերություններում, հասարակության և տնտեսական գործունեության քրեականացումը, որը բխում է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ գործազրկության աճը, քանի որ հանցագործությունների մեծ մասը կատարվում է եկամուտի մշտական աղբյուր չունեցող անձանց կողմից, պետական մարմինների պաշտոնյաների մի մասի սերտաճումը կազմակերպված հանցագործության հետ, հանցագործ կառույցներին արտադրական կարողությունների մի զգալի մասի կառավարմանը մասնակցելու իրական հնարավորությունների ընձեռումը, քրեական անցյալ ունեցող անձանց ներթափանցումը ղեկավար կառույցներ, պետական վերահսկողության համակարգի թուլացում, որը

հանգեցրել է ներքին ֆինանսական շուկայում, մասնավորեցման ոլորտում, արտահանման ներմուծման գործարքներում և առևտրում քրեական տարրերի և կառույցների գործունեության ընդլայնման և որոշակի աշխուժացման:

Սպառնալիքների առաջացման հիմնական պատճառները

Ընդհանուր առմամբ, սպառնալիքների պատճառներ են հանդիսանում ձեռնարկությունների ֆինանսական դրության անկայունությունը, ներդրումային անբարենպաստ միջավայրը, դրամավարկային անարդյունավետ քաղաքականությունը և այլն:

Մի կողմից վառելիքաէներգետիկ համակարգի, ռազմաարդյունաբերական համալիրի, ծանր արդյունաբերության մի շարք ճյուղերի արագընթաց զարգացումը, մյուս կողմից, այն ճյուղերի և բնագավառների ծայրաստիճան թույլ զարգացումը, որոնք անմիջականորեն կոչված էին բավարարելու մարդկանց հոգևոր, մտավոր և նյութական պահանջները այսօր էլ հնարավորություն չեն ընձեռում ամուր հիմքերի վրա դնել թեթև, սննդի և արդյունաբերության այլ հարակից ճյուղերի զարգացումը, ծառայությունների ոլորտը և լուծել կենցաղային հիմնահարցերը: Փաստորեն, նախկին տնտեսակարգի օրոք անընդհատ վերարտադրվել են ձևավորված կառույցներն՝ առանց ապահովելու դրանց կապը հասարակության փոփոխվող պահանջմունքների բավարարման հետ:

Անհրաժեշտություն է առաջացել ապահովել տնտեսության կայուն աճ, որը կզուգորդվի ժամանակակից կառուցվածքային փոփոխությունների հետ: Արտադրության կառուցվածքի հետ շուկայական պահանջարկի կապի ապահովումը երկրի տնտեսության առանցքային խնդիր ներից մեկն է դառնում: Իրականում, տնտեսության ներսում նկատելի է բնակչության կողմից սպառումների և ապրանքների արտադրության միջև անհավասարակշռություն, որը լրացվում է արտաքին պարտքը ծանրաբեռնող ներմուծման հաշվին:

Այսպիսով, լայն սպառման ապրանքների արտադրության անկումը գերազանցել է ապրանքների սպառման անկման ցուցանիշը: Դրա հետևանքով առաջացած ճեղքվածքը

լրացվել է ներմուծման հաշվին, որն ունի աճի միտում: Դրանով իսկ հանրապետության տնտեսության ներսում անընդհատ, տարեցտարի ընդլայնվող մասշտաբով ինքնավերարտադրվում է պահանջարկի և առաջարկի միջև տեղ գտած համընդհանուր մակրոկառուցվածքային անհավասարակշռություն:

Տնտեսության կառուցվածքային փոփոխությունները ներառում եներկու հիմնական փուլեր՝ պասիվ և ակտիվ: Առաջին փուլում տեղի է ու նենում շուկայի կողմից չպահանջվող ապրանքների և ծառայություննե րի արտադրական և այլ հզորությունների արտանետում: Երկրորդ փուլում կուտակվում և զարգացվում են հզորություններ, որոնք անհրաժեշտ են նախկինում արտադրվող ապրանքների մրցունակության բարձրացման համար և ստեղծվում են նոր հզորություններ՝ ապրանքների նոր տեսակների արտադրության համար: Կառուցվածքային վերակառուցման համար անհրաժեշտ է՝ «որոշել տնտեսավարման ներկա համակարգում գործող ձեռնարկությունների պահպանման նպատակահարմարությունը, «ռազմաարդյունաբերական համալիրի (քաղաքացիական կարիքներին վերակազմավորելու գործընթացում չներառված) ձեռնարկությունների հաշվառում, «ձեռնարկությունների առանձնացում՝ բացառելով դրանց կառավարման վերահսկիչ փաթեթի տրամադրումը ոչ պետական, մասնավոր ընկերությունների կամ անձանց, «կառուցվածքային առաջընթաց տեղաշարժերի իրականացման նպատակով տնտեսության առավել արդյունավետ ճյուղերում օտարերկրյա ներդրումների ներգրավում, «տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորման նպատակով այսպես կոչված լոկոմոտիվային ճյուղերի օրենսդրական ձևակերպում՝ նախատեսելով դրանց առաջնահերթ ֆինանսավորում, արտոնություններ և այլն:

Ներքին և արտաքին սպառնալիքների համադրումը վկայում է, որ հանրապետության համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ (օրինակ՝ արտաքին պարտքի ավելացումը, մերձավոր արտերկրի հետ արտաքին առևտրային շրջանառության ծավալների կրճատումը և այլն) բխում են ներքին

պատճառներից. տնտեսության ցածր արդյունավետություն, վերամշակող ճյուղերի ցածր մրցունակություն և հարակից գործոններ:

# ԳԼՈՒԽ 2

## 2.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՕԲՅԵԿՏՆԵՐԸ, ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Անցանկալի արտաքին ազդեցություններից և ներքին ցնցումներից պաշտպանվելու պահանջը հիմնական պահանջմունք է հասարակության և պետության համար: Այս պահանջմունքի մշտական և զանգվածային անբավարարությունը բացասաբար է անդրադառնում հասարակության կյանքի վրա:

Պալատոնի աշխատություններում հանդիպում ենք անվտանգության այսպիսի բացատրության. «Անվտանգությունը մարդու համար վտանգի կամ չարիքի բացակայությունն է»:

Հնում անվտանգության ըմբռնումը դուրս չէր գալիս ամենօրյա պատկերացումների սահմաններից:

Անվտանգության հասկացությունը որոշակի զարգացում է ապրել, սակայն հիմքում անվտանգության երևույթի ընկալումը մնում է նույնը՝ սպառնալիքի, չարիքի և վտանգի բացակայությունը:

Միջնադարում անվտանգություն ասելով հասկանում էին ցանկացած վտանգից իրեն պաշտպանված համարող մարդու հոգու հանգստությունը:

Թոմաս Հոբսն իր աշխատություններում պետության և պետական քաղաքականության հիմնական խնդիր համարում էր պետության, հասարակության և անձի անվտանգությունը միաժամանակ:

Ազգային անվտանգության խնդրին առաջին անգամ մեծ ուշադրություն սկսեցին դարձնել արևմտյան գիտնականները Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին մոտ: ԱՄՆ- ի կողմից ատոմային զենք ստեղծելը և կիրառելը անհանգստություն պատճառեցին մյուս երկրներին և նրանց

ստիպեցին մտահոգվել սեփական ազգային անվտանգության և գոյատևման խնդիրներով:

Եվրոպական հետազոտողների կողմից կարևորվեցին ազգային անվտանգության ապահովման ոչ ռազմական գործոնները և հատկապես դրանց տնտեսական տարրը: Սա դարձավ տնտեսական անվտանգության գաղափարի զարգացման հիմնական ուղղությունը:

Ազգային տնտեսության հիմնական ճյուղերի անհամաչափ զարգացումն անուղղակի բացասական ազդեցություն էր ունենում ռազմական հատվածի վրա՝ ռազմական և քաղաքացիական տնտեսությունների միջև բազմաթիվ կապերի առկայության պատճառով:

Խորհրդային շրջանում «պետական անվտանգություն» հասկացությունը մտցվեց 1934 թվականից: Այս հասկացությունն արտահայտում էր ամբողջ հասարակության և անհատի շահերի հանդեպ պրոլետարիատի դիկտատուրայի՝ պետության շահերի առաջնայնության մասին պաշտոնական տեսակետը:

Ազգային զարգացումը հասարակության էվոլյուցիոն, բնականոն արդիականացումն է: Ազգային զարգացման հետ են կապված այն հիմնական արժեքները, որոնց սպառնալիքից ազատ վիճակը, առաջընթացն ու անվտանգությունն էլ պետք է ապահովվեն:

Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի հիմքում ընկած է Արևմուտքի արդիականացված հասարակությունների արժեքային համակարգը: Այն ենթադրում է պահանջմունքների, շահերի, արժեքների ձևավորում անհատներից և քաղաքացիական հասարակությունից: Դա վերաբերում է նաև անվտանգության պահանջմունքներին, շահերին ու արժեքներին:

Այսպիսի արժեքային համակարգ ունեցող հասարակություններում պահանջմունքների ձևավորումն ընթանում է «պակասության հայեցակարգի» տրամաբանությամբ՝ հենվելով երկու նախադրյալների վրա.

1. Հասարակության մեջ առաջնահերթությունները ձևավորվում են դեպի ինչ - որ բանի ՛ պակասությունը ՚ կողմնորոշվելուն համապատասխան՝ մարդիկ մեծ արժեք են տալիս նրան, ինչը հասարակության մեջ համեմատաբար քիչ է:

2. Մարդու անհատական արժեքային կողմնորոշումներն ու առաջնայնություններն արտացոլում են այն պայմանները, որոնցում ընթացել է նրա սոցիալականացումը:

Սոցիալ – տնտեսական և քաղաքական անբարենպաստ պայմաններում սոցիալականացած մարդիկ սովորաբար շեշտում են հասարակության նյութական նպատակների նշանակությունը, ինչպիսիք են տնտեսական բարեկեցությունը, հասարակական անվտանգությունը, օրինականությունը և կարգը, կրոնական արժեքները և ուժեղ ազգային պաշտպանությունը:

Երբ հասարակությունը ձեռք է բերում ավանդական նպատակները, երիտասարդ սերունդն ավելի շատ ուշադրություն է դարձնում ՛ պոստ - նյութական ՚ նպատակներին՝ ինքնարտահայտում, անձնական ազատություն, սոցիալական հավասարություն, ինքնաիրացում և կյանքի որակի պահպանում:

Այս բոլոր արժեքներն ու պահանջմունքները միասին կազմավորում են անվտանգության արժեքային համակարգը:

Միջազգային ֆինանսական կազմակերպությունները, ըստ հայտարարվող նպատակների, կոչված են նպաստելու զարգացող երկրների տնտեսական վերելքին և համաշխարհային տնտեսության մեջ միավորվելուն: Սակայն իրականում հաճախ դրանք իրենց գործունեությունը ծավալում են ի շահ գերտերությունների՝ բացասական ազդեցություն թողնելով ՛ աջակցություն ՚ ստացող երկրի վրա:

Երկրի տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից մեծ դեր ունեն նաև վերազգային կորպորացիաները: Վերազգային կորպորացիաների և ազգային տնտեսության շահերի բախման արդյունքում

սովորաբար հաղթում են վերազգային կորպորացիաները և պարտված երկրի տնտեսությունը շատ հաճախ կրում է կենսամակարդակի անկում:

Այստեղ առաջ է գալիս գլոբալ և տարածաշրջանային համագործակցության պահանջ, որի հիմքում պետք է դրվեն քաղաքական և տնտեսական սկզբունքները:

Երկրների միջև փոխկապվածության աճն իրար է կապում ազգային տնտեսական անվտանգության և տարածաշրջանային ու գլոբալ խնդիրների լուծման շահերը:

Համամարդկային խնդիրների լուծումը ևս մեկ գործոն է, որը կարող է իր ազդեցությունն ունենալ առանձին երկրների տնտեսական անվտանգության վրա: Սակայն այն ավելի շատ միտված է համընդհանուր անվտանգության գաղափարի զարգացմանը:

Անվտանգությունը կարելի է ներկայացնել նաև որպես ռիսկերից, վտանգներից, սպառնալիքներից և մարտահրավերներից պաշտպանվածություն կամ օբյեկտի կայուն գոյության վիճակ, որի դեպքում նրա կենսագործունեության որևէ բնութագրի անցանկալի փոփոխման հնարավորությունը հասցված է նվազագույնի:

Ըստ անվտանգության նեղ սահմանման, ազգային անվտանգությունը ներառում է տարածքի պաշտպանություն, արտաքին քաղաքականություն, հետախուզություն և հակահետախուզություն:

Ազգային անվտանգության համակարգի օբյեկտը ազգային վտանգներն են (ազգի գոյության դեմ ուղղված և (կամ) նրա նորմալ կենսագործունեությունը, առաջընթացը, զարգացումը սահմանափակող վտանգներն են):

Սուբյեկտ ասելով հասկանում ենք ազգեր, ազգերի դաշինքներ և որոշակի առաքելությամբ օժտված վերազգային կազմակերպություններ, որոնք ունեն նպատակ և այն իրականացնելու համար կատարում են որոշակի

գործողություններ:

Արտաքին և ներքին վտանգների ամբողջությունը հանդիսանում է ազգային անվտանգության օբյեկտը:

Լայն իմաստով ազգային անվտանգության սուբյեկտ է ողջ ազգը՝ իր բոլոր ներքին և արտաքին սուբյեկտներով, սակայն դրանցից հիմնականները ազգային այն հարստություններն են, որոնք ներգրավված են ազգային անվտանգության համակարգում: Անվտանգության խնդրի բարդությունից կախված ցանկալի է բոլոր հաստատությունների ներգրավվածությունը ազգային անվտանգության համակարգում:

Անվտանգությունը օբյեկտի սպառնալիքից ազատ վիճակն է, ինչպես նաև՝ սուբյեկտի կողմից այդ վիճակի ձեռքբերման, պահպանման ու ամրապնդման նպատակով օբյեկտի վրա ներգործության որոշակի մեթոդներով իրականացվող գործառույթ, այդ գործառույթի իրականացումն ապահովող ու անվտանգության ձեռքբերման գործընթացն ուղղորդող համակարգ:

Ազգային անվտանգության համակարգում առաջնայինը արժեքները և նորմերն են, որոնք սահմանում են որոշակի պարտավորություններ, պարտականություններ և իրավունքներ՝ պայմանավորելով համարժեք դերակատարումների՝ գործառույթների, ինչպես նաև ինստիտուտների, փոխազդեցության և ներգործության եղանակների, մեթոդների ու մասնագիտացված հանրույթի բնույթը:

Անվտանգության ապահովման միջոցները կարելի է դասակարգել ըստ անվտանգության բաղադրամասերի: Կարող ենք առանձնացնել քաղաքակիան ( նաև ռազմական ), տնտեսական, սոցիալական և մշակութային միջոցները:

Ռուսաստանի ազգային անվտանգության հայեցակարգում ազգային անվտանգությունը հասկացվում է որպես քաղաքացիների, հասարակության և պետության՝ կենսականորեն կարևոր շահերի, ինչպես նաև ազգային

արժեքների և կենսակերպի պաշտպանվածություն ներքին և արտաքին սպառնալիքների ընդարձակ սպեկտրից, որոնք իրենց բնույթով տարբեր են:

ԱՄՆ դեպքում ակնհայտ է ռազմաքաղաքական բաղադրամասի առանցքային, առաջնային լինելը, ինչպես նաև տնտեսական անվտանգության կարևորումը, քանզի տնտեսությունը բազիսային նշանակություն ունի քաղաքական համակարգի համար:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առաջին ընթերցմանը ներկայացված «ՀՀ անվտանգության մասին» օրենքի նախագծում անվտանգության հասկացությունը ներկայացվում է որպես արտաքին և ներքին սպառնալիքներից անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության վիճակ: Կենսականորեն կարևոր շահերը պահանջմունքների ամբողջություն է, որոնց բավարարումն ապահովում է անձի, հասարակության և պետության գոյության և առաջընթաց զարգացման հնարավորությունները:

Համաձայն ՙ ՀՀ անվտանգության մասին ՚ օրենքի նախագծի՝ անվտանգության օբյեկտ են .

1. անձը, նրա իրավունքներն ու ազատությունները,
2. հասարակությունը, նրա հոգևոր և նյութական արժեքները ,
3. պետությունը, նրա սահմանադրական կարգը, իշխանությունը և տարածքային ամբողջականությունը:

Անվտանգության ապահովման հիմնական սուբյեկտ է պետությունը՝ իր օրենսդիր, գործադիր և դատական մարմիններով, նաև քաղաքացիները, կուսակցությունները, հասարակական միավորումները և կազմակերպությունները, եթե ՀՀ օրենսդրությանը համաձայն՝ ունեն անվտանգության ապահովմանը մասնակցելու իրավունքներ և կրում են պարտականություններ:

Անվտանգության ապահովման սկզբունքներն են.

ա) օրինականությունը,

բ) անձի, հասարակության և պետության անվտանգության հաշվեկշռվածության ապահովումը,

գ) անձի, հասարակության և պետության անվտանգության փոխադարձ պատասխանատվությունը,

դ) միջազգային անվտանգության համակարգների հետ համագործակցությունը:

Անվտանգության համակարգի հիմնական գործառույթներն են.

ա) անձի, հասարակության և պետության կենսականորեն կարևոր շահերի դեմ ուղղված արտաքին և ներքին սպառնալիքների հայտնաբերումն ու կողմնորոշումը, դրանց վնասազերծմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

բ) անվտանգության ապահովման ուժերի և միջոցների ստեղծումը, պատրաստականության ապահովումը և դրանց կառավարումը,

գ) արտակարգ իրավիճակի հետևանքով տուժած տարածքներում անվտանգության ապահովման օբյեկտների բնականոն գործունեության վերականգնման համալիր միոցառումների իրականացում,

դ) ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում ՀՀ սահմաններից դուրս անվտանգության ապահովման միջոցառումներին մասնակցությունը:

՝Անվտանգություն ՚ հասկացությունը սերտորեն կապված է ՝ ազգային շահեր ՚ կատեգորիայի հետ: Անվտանգությունը բխում է ազգային շահերից:

Երբեմն ազգային անվտանգությունը սահմանում են որպես ազգային կենսակերպի և գոյապահպանության, ինչպես նաև զարգացման նկատմամբ սպառնալիքների բացակայություն:

Ազգային անվտանգությունն իր հերթին տարանջատվում է պետության,

հասարակության և անձի անվտանգությունների:

Տարածաշրջանային քաղաքական անվտանգության և զարգացման համակարգում ՀՀ դերը պետք է լինի այնպիսին, որ ՀՀ շահերի ոտնահարմանն ուղղված յուրաքանչյուր գործողություն կամ ՀՀ թուլացումը սպառնալիքներ առաջացնի տարածաշրջանի մյուս պետությունների կենսական շահերի իրականացման համար:

Տնտեսական անվտանգության ռազմավարության մշակման ժամանակ կարևոր է հաշվի առնել տեղային և գլոբալ սկզբունքները: Տեղայնության սկզբունքը ենթադրում է այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնք կարող են հակազդել ծագող տնտեսական վտանգավոր գործընթացներին և խթանել նրանց զարգացումը, իսկ գլոբալության սկզբունքը գործածվում է լոկալության սկզբունքի խախտման ժամանակ և ենթադրում է հետևանքների դեմ պայքարի լայնածավալ կազմակերպական միջոցառումների ստեղծում և դրանց իրականացում:

Ֆունկցիոնալ կողմնորոշվածության տեսանկյունից տնտեսական անվտանգությունը կարող է մասնատվել ներքին և արտաքին տնտեսական պաշտպանողական մեխանիզմների: Արտաքին տնտեսական մեխանիզմը ենթադրում է տնտեսական համակարգի անվտանգության պայմանների ստեղծում: Կապը ներքին տնտեսական մեխանիզմի հետ իրականացվում է պետական բյուջեի միջոցներով: Այն պատասխանատվություն է կրում կայուն տնտեսական իրավիճակի ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման բարդությունները սկսվում են աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքից և ռազմավարական նշանակության բնական ռեսուրսներով ապահովվածության ցածր աստիճանից:

Հենց այս բարդությունների հաղթահարման և հանրապետության

բնակչության գոյատևման և զարգացման խնդիրն է արդիական դարձնում Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հնարավորությունների ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուրի լուծումն ավելի դյուրին է լինում դրա տնտեսական բաղադրիչի ապահովվածության պայմաններում:

Հետազոտությունների հիմնական նպատակն է՝ միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա և Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության յուրաքանչյուր հատվածի կենսականորեն կարևոր ոլորտները բնութագրող որոշակի թվով ցուցանիշների միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի ձևավորումը և դրանց սահմանային կամ շեմային արժեքների որոշումը: Դա հնարավորություն կտա այդ ցուցանիշների սահմանային և փաստացի արժեքների տարբերության վերլուծության միջոցով բացահայտել և գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության սպառնալիքները, դասակարգել դրանք և առաջարկել սպառնալիքների չեզոքացման կոնկրետ ուղիներ:

Հետազոտությունների հնարավոր է բացահայտել այն սպառնալիքները, որոնք կառաջանան հետագա տարիներին և որոշել դրանց սահմանային արժեքները Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության տեսանկյունից:

Գործնական նպատակներով կարող են օգտագործվել նաև ուսումնասիրության տեսական մասն ընդհանրացնող տնտեսական անվտանգության հասկացության զարգացումների վերաբերյալ եզրակացությունները: Սա հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ոլորտներում երկարաժամկետ

ծրագրերի, մշակման տեսանկյունից:

Տնտեսական անվտանգության ապահովումը պետության կարևորագույն գործառույթներից է: Հարցով զբաղվող գիտնականների մեծամասնությունը եզրակացնում է, որ տնտեսական անվտանգություն կապահովվի, եթե միաժամանակ և ճիշտ գնահատվեն դրա հիմնական տարրերը՝ խոցելիության աստիճանը և սպառնալիքի իրականացման հնարավորությունը:

Խոցելիությունն անհրաժեշտ է հասկանալ որպես գործընկերների միջև այնպիսի կախվածություն, որի դեպքում արտաքին տնտեսական հարաբերությունների վատթարացումը առաջացնում է հարմարվելու հետ կապված այնպիսի ծախսեր, որոնք տվյալ երկրի տնտեսությունն ի վիճակի չէ կրել:

Այսինքն՝ անհրաժեշտ է լինելու ստեղծել մի համակարգ, երբ ցանկացած հարված հանրապետությանը առաջացնի ոչ միայն ՀՀ – ի, Սփյուռքի ու միջազգային կազմակերպությունների ազդեցությունը, այլև ապակայունացնի և ապակազմակերպի զարգացման ամբողջ համակարգը՝ մեր հարևան երկրների համար ստեղծելով կենսական սպառնալիքներ:

Սրանք հիմնական սկզբունքային կետերն են, որոնց իրականացումը նախապայմաններ կստեղծի միայն ազգային անվտանգության և զարգացման համալիրի ստեղծման համար:

Առանձին փորձեր են կատարվում որոշակի առաջընթաց ապահովելու համար, սակայն հիմնախնդիրը հրատապ է մնում մինչև այժմ: Պատճառները կարող են բազմաթիվ լինել: Օրինակ՝

1. Հայաստանում ռազմավարական մշակույթի բացակայությունը, որն անդրադառնում է ռազմավարական պլանավորման արժեքավորման վրա:
2. Քաղաքական ընտարնու հակվածությունը իրավիճակային լուծումների և մարտավարական գործողությունների պլանների միջոցով պետության

կառավարումն իրականացնելու հակումը:

3. Մեր երկրի թուլությունը և փոքր չափսերը, ինչը Հայաստանն առավել մեծ կախվածության մեջ է դնում արտաքին աշխարհի ազդեցությունից՝ պարտադրելով արձագանքել միջազգային քաղաքական համակարգի պահանջներին:

4. Երկրի ծանր սոցիալ - տնտեսական իրավիճակը և հասարակական լայն խավերի մտահոգությունը բացառապես հանապազօրյա հաց ձեռք բերելու հիմնախնդրով:

5. Քաղաքական ինստիտուտների, մասնավորապես կուսակցությունների թույլ կայացումը, ինչը քաղաքական համակարգում ՙ հոսունություն ՚ է առաջացնում և այլն:

Միջազգային անվտանգությունը միջազգային հարաբերությունների այնպիսի վիճակ է, երբ երաշխավորված են յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության արտաքին բաղադրիչները, և գործնականորեն միջազգային հակասությունների լուծման ժամանակ բացառվում է պատերազմների կամ ռազմական ընդհարումների սպառնալիքը:

Ազգային անվտանգությունը համակարգ է, որտեղ անընդհատ փոխհարաբերության մեջ են գտնվում անձի, հասարակության և արտաքին սպառնալիքները: Այս համակարգի նպատակային գործառույթը տվյալ շահերի պաշտպանվածության գոնե բավարար մակարդակի ապահովումն է սպառնալիքից:

Ազգային անվտանգության համակարգում պետք է որոշվեն այն ուժերն ու միջոցառումները, որոնք պետք է ապահովեն ազգային անվտանգությունը:

Ազգային անվտանգության ապահովման համակարգում պետք է ընդգրկվեն նաև անվտանգության խորհուրդները, ուժային կառույցները, օրենսդրական մարմինները և պետական իշխանության այլ մարմիններ:

Խորհուրդները լինում են ներկայացուցչական: Նրանցում ներկայացված են լինում պետական մեքենայի մեջ քիչ թե շատ ինստիտուցիոնալ ինքնուրույնություն ունեցող ոլորտները, քաղաքական համակարգում զգալի ազդեցության հասած քաղաքական ուժերը:

Մարմին հենց խորհուրդ ( կոլեգիա ) է, ոչ թե վարչություն կամ նախարարություն, հաճախ խորհրդակցական ձայնով, սակայն կարևորագույն որոշումների կայացման ժամանակ վճռական դեր է խաղում:

Համաձայն օրենսդրության, բոլոր պետությունների կազմում միշտ կա ևս մեկ մարմին, որին վերագրվում է անվտանգության երաշխավորի պարտականությունը: Անվտանգության խորհուրդները գործում են միայն նրա մանդատով:

ՀՀ ազգային անվտանգության և զարգացման գերակայությունները փոխկապակցված են:

Ազգային անվտանգության գերակայություններն են.

- ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծումը և պաշտպանական համակարգի գերակայությունը,
- հզոր և գործունակ դիվանագիտական համակարգ,
- արտաքին հետախուզության զոր համակարգի ստեղծում,
- գործունակ քաղաքական ընտրանու ձևավորում և ռեկրուտավորման մեխանիզմի ստեղծում,
- ամուր և գործուն քաղաքական ինստիտուտներ,
- ժողովրդավարության իրական և երկարաժամկետ մեխանիզմների ստեղծում,
- ներքին համաձայնության մթնոլորտի կերտում և հանրության ներսում ճեղքվածքի վերացում,
- սոցիալական և տնտեսական զարգացման մեխանիզմների ստեղծում,

- պերմանանտ զարգացման ապահովում:

Անվտանգությունը դինամիկ երևույթ է՝ անհրաժեշտ համակարգի գոյապահպանության և զարգացման համար:

## 2.2 Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը

Պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման համար կարևորագույն գործիքներ են հանդիսանում տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի կազմավորումը և դրանց սահմանային արժեքների որոշումը: Սահմանային արժեքները քանակական պարամետրեր են, որոնց միջոցով հնարավոր է դառնում գնահատել տնտեսության որոշակի ոլորտներում ձևավորված դրության խոցելիության և սպառնալիքի չափը՝ տնտեսական անվտանգության տեսամկյունից: Տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային արժեքների որոշման միջոցով պետության տնտեսական շահերին տրվում է քանակական որոշակիություն:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային արժեքների որոշման համար անհրաժեշտ է պետության տնտեսական շահերը սկզբունքորեն գնահատել և հիմնավորել:

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշները, երկրի տնտեսական շահերին համապատասխան, նպատակահարմար է խմբավորել ըստ տնտեսության հատվածների. իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և արտաքին: Որպես ածանցյալ ցուցանիշներ հանդես են գալիս սոցիալ - ժողովրդագրական ցուցանիշները:

Անվտանգության գնահատման ժամանակ կարևոր են ինչպես որակական, այնպես էլ քանակական չափանիշները:

Որակական չափանիշները սահմանվում են ընդունակությունների և

համակարգային ամբողջականության եզրերով՝

1. սպառնալիքից ձերբազատվելու քաղաքականություն հետամտելու հասարակության, պետության ընդւոնակությունը,

2. սեփական անկախ ինքնուրույնությունը և ֆունկցիոնալ ամբողջականությունը պահպանելու պետությունների ու հասարակությունների ընդունակությունը:

Հաջորդ երկու չափանիշներն են՝

1. պաշտպանվածության աստիճանը, դրանք պաշտպանելու ունակությունը,

2. մարտահրավերների դեպքում հաղթանակ տանելու միջոցով դրանք պաշտպանելու ունակությունը:

Տարբեր երկրների տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը և դրանց սահմանային արժեքները տարբերվում են միմյանցից: Դա պայմանավորված է ազգային շահերի և դրանք իրականացնելու ուղիների տարբերությամբ:

Այս տարբերությունը հատկապես ցայտուն է արտահայտվում առանձին, նույնիսկ փոքր պետությունների ազգային ու տնտեսական շահերի համեմատության դեպքում:

Ոչ բոլոր ցուցանիշների և դրանց սահմանային ( շեմային ) արժեքների գծով կարելի է համեմատել ՀՀ տնտեսական անվտանգության աստիճանը այլ երկրների հետ, ըստ ՀՀ համար որոշված սահմանային արժեքների և հակառակը: Գոյություն ունեն ցուցանիշներ, որոնց գծով բոլոր երկրներն էլ ձգտում են հետ չմնալ: Դրանք առաջին հերթին սոցիալ - ժողովրդագրական ցուցանիշներն են:

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգը կազմավորելուց հետո կատարվում է վերլուծություն՝ դրանց սահմանային արժեքների որոշման նպատակով:

Մանրամասն վերլուծվում են առաջարկվող ցուցանիշներից յուրաքանչյուրն առանձին - առանձին, որոշվում են դրանց սահմանային արժեքները ՀՀ տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից:

Յուրաքանչյուր առանձին ցուցանիշի սահմանային արժեքը որոշելուց առաջ կատարվում են դրանց դինամիկայի վերլուծություն և վարքագծի վրա ազդող գործոնների ուսումնասիրություն: Որից հետո ցուցանիշը համեմատվում է հարևան երկրի, տարածաշրջանային երկրի, միջին համաշխարհային, երկրների խմբերի նույն ցուցանիշի հետ: Սա բոլոր ցուցանիշների գծով ընդհանրական մոտեցում է: Այնուհետև հաշվի է առնվում, թե ՀՀ ազգային շահերի տեսանկյունից տվյալ ցուցանիշի ինչպիսի մակարդակ է անհրաժեշտ ապահովել և արդյոք պատմականորեն եղել են այնպիսի երկրներ, որոնց հաջողվել է լուծել այդպիսի խնդիրներ: Հաշվի են առնվում նաև հեղինակավոր միջազգային, օտարերկրյա և հայրենական կազմակերպությունների փորձագետների կարծիքները և հետազոտությունների արդյունքները: Այս բոլոր ուսումնասիրությունների և դրանց արդյունքների համադրության արդյունքում միայն որոշվում է ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների սահմանային արժեքը:

Սահմանային արժեքի որոշումից հետո կատարվում է ՀՀ տնտեսական անվտանգության փաստացի արժեքների համեմատություն սահմանային արժեքների հետ, որի արդյունքում որոշվում է ցուցանիշների փաստացի արժեքների շեղվածության աստիճանը:

ՀՀ տնտեսական անվտանգությունտ գտնվում է բավարար անվտանգ վիճակում և դրա ապահովման գործընթացում:

Գնահատման միասնական երեք բալային սանդղակը ենթադրում է ցուցանիշի հետևյալ աստիճանավորումը՝

- սպառնալիք, երբ երկարաժամկետ հատվածում ցուցանիշը դրսևորում է

այնպիսի մակարդակ, որն էականորեն շեղված է որոշված սահմանային արժեքից, ընդ որում հնարավոր չէ դրա մեղմացումը այլ գործոնների հաշվին,

- վտանգ, երբ ցուցանիշի փաստացի արժեքը տատանվում է որոշված սահմանային արժեքին մոտ միջակայքում,
- անվտանգություն, երբ տնտեսական անվտանգության ցուցանիշը երկարաժամկետ հատվածում գտնվում է որոշված սահմանային արժեքից բավականաչափ հեռավորության վրա՝ ապահով գոտում:

## 2.3 Տնտեսական անվտանգության արտաքին և ներքին սպառնալիքները

Մակրոտնտեսական վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներից բացի, կարևոր են նաև ՀՀ տնտեսական անվտանգության յուրաքանչյուր սպառնալիքի չեզոքացման կոնկրետ ուղիները: Նշված միջոցառումների իրականացումը թույլ կտա էականորեն բարելավել ՀՀ տնտեսական անվտանգությունը:

Տնտեսական անվտանգության սպառնալիքների չեզոքացման տեսանկյունից առաջնային խնդիր է տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը: Որպես հիմնական մակրոտնտեսական ցուցանիշ ՀՆԱ մեծությունը և աճի տեմպերը հնարավորություն են ընձեռում միաժամանակ վիճակը բարելավել մի շարք ոլորտներում: Սակայն տնտեսական աճի բարձր տեմպերը սպառնալիքների վերացման անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման են: Մյուս կարևոր պայմանը եկամուտների բաշխման հավասարակշռության սկզբունքի պահպանումն է, ինչը բնակչության հնարավորություն կտա զգալ տնտեսական աճի դրական ազդեցությունը:

Նաև պետք է նկատի ունենալ սպառնալիքների վերացման նպատակով

տնտեսությունում առկա ռեսուրսային ներուժի օգտագործման հնարավորությունները և սահմանափակումները:

Առկա ներուժի օգտագործման հիմնական խոչընդոտը վերջնական պահանջարկի փոքր լինելն է, որի արդյունքում ազգային տնտեսությունը գտնվում է ներմուծումից կախվածության մեջ:

Կարևոր է փոքր տնտեսությամբ երկրների տնտեսական անվտանգության ապահովման ռազմավարական ուղղվածության հարցը: Փոքր երկրների անդամակցությունը տարբեր միջազգային կազմակերպություններին և կառույցներին երաշխավորում է դրանց ազգային և տնտեսական անվտանգությունը: Սակայն հայ ակադեմիկոս Միքայել Քոթանյանը եզրակացնում է, որ տարբեր նպատակներով ստեղծված միջազգային կառույցներն իրականում ծառայում են գերտերությունների ռազմավարական շահերին և փոքր երկրների անվտանգության ապահովման երաշխիք չեն:

Համաշխարհային տնտեսական հարաբերությունների եռամակարդակ պարզեցված հիերարխիան, բացահայտում է նրա տարբեր մակարդակների միջև առկա կապերն ըստ փոխազդեցության ուղղության:

Առաջին մակարդակում գերտերությունների աշխարհաքաղաքական և տնտեսական շահերը:

Երկրորդ մակարդակը տվյալ երկրում ձևավորվող և իրականացվող մակրոտնտեսական քաղաքականությունն է:

Երրորդ մակարդակը միկրոէկոնոմիկան է կամ անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտը:

Տնտեսական քաղաքականության ռազմավարական ուղղվածությունը պետք է նպաստի փոխկապվածության ձևավորմանը գործընկերների միջև:

Արտաքին պարտքի վտանգավոր մեծությունը երկիրը կախվածության մեջ է գցում պարտատեր ազգերից:

Հայաստանը, որպես վարկեր ստացող երկիր, ունի որոշակի խնդիրներ՝ կապված կուտակված արտաքին պարտքի հետ:

Տնտեսության մրցակցային հնարավորությունների անբավարար վիճակը, արտաքին օգնության անհրաժեշտությունը, տնտեսական գործունեության մի շարք բնագավառների մենաշնորհացումը, մեկ շնչի հաշվով եկամուտների ցածր մակարդակը թույլ չեն տալիս տնտեսության արագ վերականգնման համար օգտագործել բոլոր հնարավորությունները:

Տնտեսական են համարվում ներքին և արտաքին այն վտանգները, որոնց թիրախը տվյալ տնտեսական համակարգն է կամ բխում են այլ տնտեսական համակարգերից: Ազգային անվտանգության բաղադրամասը կոչված է ապահովելու տնտեսական համակարգի սպառնալիքներից ազատ վիճակը, որը տնտեսական անվտանգությունն է:

Այս խմբի շրջանակներում ազգ - պետություն համակարգի սոցիալական բաղադրիչի հետ կապված ու տնտեսության վրա ազդող սպառնալիքներ են բնակչության աճը կամ հակառակը՝ նվազումը, արտագաղթը, որոնք հանգեցնում են ընչաքաղցության:

Տնտեսական վտանգներ են համարվում նաև անլեգալ բիզնեսը, մաֆիան, կոռուպցիան և այլն, որոնք ոչ միայն վտանգի աղբյուրներ են, այլ նաև կարող են լարվածություններ առաջացնել պետությունների միջև:

Տնտեսական վտանգների խմբում ինքնուրույն խումբ են կազմում էկոլոգիական վտանգները:

Վտանգների այս խմբի կառավարման խնդիրներն է լուծում էկոլոգիական անվտանգությունը տնտեսական անվտանգության շրջանակներում:

Տնտեսական անվտանգությանը սպառնացող վտանգները կարող են դասակարգվել ըստ մի շարք հատկանիշների: Ըստ աղբյուրների՝ կարող են լինել ներքին և արտաքին: ՀՀ տնտեսությունում բարփոխումների փուլում

առաջացած և տնտեսական անվտանգությանը սպառնացող ներքին հիմնական սպառնալիքներն են՝

- տնտեսության կառուցվածքային ձևախախտման ուժեղացումը,
- հայրենական արտադրանքի մրցունակության ցածր մակարդակը,
- ընդլայնված վերարտադրության պայմաններում տնտեսության գործելու անկարողությունը,
- բնակչության պահանջարկի և ապրանքների արտադրության միջև անհավասարակշռությունը,
- տնտեսության տարբեր ճյուղերում մենաշնորհի գոյության բարձր տեսակարար կշիռը,
- արտադրության արդյունավետության բարձրաման խթանիչ շարժառիթների բացակայությունը,
- արհեստականորեն կայունացված փոխարժեքները,
- հանրապետության մարզերի տնտեսական զարգացման անհամաչափության խորացումը,
- հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը,
- տնտեսական հանցագործությունների աճը,
- պետական վերահսկողության համակարգի թուլացումը:

Արտաքին սպառնալիքների թվին են դասվում՝

- երկրի վերածումն այս կամ այն զարգացած պետության կցորդի,
- միջազգային հանրության հետ արտաքին առևտրում խտրականության տարբեր դրսևորումները,
- ներկրումների նկատմամբ որոշակի հակումների ուժեղացումը, կախվածությունը ներմուծումից,
- արտաքին պարտքի ավելացումը,

- արտարժույթի արտահոսքը երկրից,
- տնտեսության դոլարայնացումը և ազգային դրամանիշի ապակայունացումը, վերջինիս դիրքերի թուլացումը:

Հանրապետության համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ առաջանում են ներքին պատճառներից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համար ամենաէական սպառնալիքներից են հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը, գործազրկության աճը, աշխատավարձի ցածր մակարդակը և այլն:

Հանրապետությունում վարձու աշխատանքի դիմաց կատարվող վճարումների մակարդակն այնպիսին է, որ դրա կարգավորումը պետք է դառնա պետության գործառնության հիմնական ուղղություններից մեկը: Առկա են դրամական աշխատավարձի նվազեցման բոլոր բացասական հետևանքները: Հայաստանի Հանրապետությունում աշխատավարձի ցածր մակարդակն անցել է տնտեսական և քաղաքական անվտանգության սահմանները:

Տնտեսության կառուցվածքի ձևախախտման հետագա ուժեղացումը երկրի անվտանգության գլխավոր սպառնալիքներից մեկն է: Տնտեսական նախկին համակարգից մնացած խնդիրները ևս իրենց այժմ զգալ են տալիս:

Կառուցվածքային վերակառուցման համար անհրաժեշտ է՝

- տնտեսավարման ներկա համակարգում գործող ձեռնարկությունների պահպանման նպատակահարմարության որոշում,
- կառուցվածքային առաջընթաց տեղաշարժերի իրականացման նպատակով տնտեսության առավել արդյունավետ ճյուղերում և բնագավառներում զգալի արտասահմանյան ներդրումների ներգրավում,
- պաշտպանական համալիրի մաս կազմող ձեռնարկությունների ցանկի

հստակեցում, որը ենթակա չէ արդյունաբերության քաղաքացիական կարիքներին ծառայեցնելու նպատակով իրականացվող վերակազմավորման գործընթացին և այլն:

Սոցիալական ոլորտն առանցքային դեր է խաղում ոչ միայն տնտեսական, այլև ազգային անվտանգության ապահովման գործում: Հայաստանի Հանրապետության անվտանգության գլխավոր սպառնալիքներից կարելի է առանձնացնել եկամուտների անհավասարաչափ բաշխումը, բնակչության կողմից սննդի պահանջմունքի լիարժեք բավարարման անկումը, թերսնումը, աղքատությունը: Զբաղվածության կրճատումը, մահացության աճը, ծնունդների թվի կրճատումը հանգեցնում են երկրում կյանքի ընդհանուր որակի անկմանը և արտագաղթի տեմպերի աճին, ինչն էլ իր հերթին է սպառնում երկրի անվտանգությանը:

Տնտեսական անվտանգության սպառնալիքների մեջ առանձնանում են ստվերային տնտեսությունը և կոռուպցիան՝ իրենց քաղաքական, սոցիալական և տնտեսական լուրջ հետևանքներով:

Այս երևույթները բնութագրական են ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներին և տարբեր երկրներում դրանց յուրահատկությունները, չափերը, պայքարի միջոցները խիստ տարբերվում են միմյանցից: Ստվերային տնտեսության առկայությունը պայմանավորված է ընդհանուր սոցիալ – տնտեսական և քաղաքական իրավիճակով, պետական կարգավորման ցածր արդյունավետությամբ, կոռուպցիայով: Ստվերային տնտեսությունը կոռուպցիայի հետ գտնվում է փոխադարձ կապի մեջ: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների, Հայաստանը պատկանում է այն երկրների թվին, որտեղ հիմնական խնդիրը վարչական կոռուպցիան է, որը վերաբերում է գործող օրենքների և իրավական ակտերի կիրարկման նպատակային խախտումներին՝ ի շահ

պետական և ոչ պետական անձանց: Կոռուպցիայի այս տեսակի հիմքում ընկած է պետական պաշտոնյաների կողմից իրենց հայեցողությամբ օրենքների և օրենսդրական ակտերի տարբերակված կիրարկումը: ԱՊՀ երկրների համար վարչական կոռուպցիայի ՙ արժեքը ՚ կազմում է ընկերությունների եկամուտների 3.7 % - ը, արևելյաեվրոպական երկրներում՝ 2.2 % - ը , Հայաստանում՝ 4.6 % - ը:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությանը սպառնացող գործընթացների մեջ կարևորվում է մտավոր կապիտալի արտահոսքը երկրից, որն իր նշանակությամբ ավելի մեծ մտահոգություն է առաջացնում և կարիք ունի անհետաձգելի քայլերի: Հանրապետությունում ստեղծված իրավիճակի պատճառով երկար ժամանակ արտագաղթում են մտավոր կարող ուժերը, ինչը իսկայական վտանգ է ներկայացնում երկրի ներկայի ու ապագայի համար: Բազմաթիվ հետազոտությունների տվյալներով, հանրապետությունից արտագաղթել են 600 հազարից մինչև 1.2 մլն. մարդ, ընդ որում արտագաղթում են երկրի ստեղծագործական ընտրանու ներկայացուցիչները:

Տնտեսական անվտանգության սպառնալիքները ներթափանցել են տնտեսության գրեթե բոլոր բնագավառները, էական ազդեցություն են գործել մարդու կենսագործունեության տարբեր ոլորտների վրա:

# ԳԼՈՒԽ 3

## 3.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ժամանակակից պայմաններում տնտեսական անվտանգության հայեցակարգի վերամշակումը և համակարգի ծրագրային ապահովումը ենթադրում է գործոնների ազդեցությունը թուլացնելու կամ կանխելու միջոցների, պետության տնտեսական գործունեության համար հիմնական ռիսկերի ու սպառնալիքների բացահայտում և հայտնաբերում:

Այն գործոնների բացահայտումը, որոնք ազդում են երկրների տնտեսական անվտանգության վրա, հիմնականում կապված են այն պատճառների հայտնաբերման հետ, որոնց գործընթացի պայմանները այս կամ այն կերպ ազդում են տնտեսության վիճակի վրա, կարող են զսպել կամ կանխել դրա զարգացումը:

Ըստ իս, հիմնվելով տնտեսական անվտանգության հայեցակարգի վրա, հարցը վերաբերում է ոչ թե ուժերի հարաբերակցությանը, այլ տարբեր շահեր ունեցող խմբերի հավասարակշռությանը հասնելուն, ինչպես օրինակ ազգային և միջազգային: Այս հավասարակշռությունը խախտելու դեպքում հանրապետությունների միջև տնտեսական ոլորտում փոխկապվածությունը գործոնից վերածվում է հակադիր գործոնի՝ ապակայունացնող և տնտեսական անվտանգությունը խափանող:

Պետք է նշել, որ տնտեսական անվտանգության հիմնական, որոշիչ գործոն են հանդիսանում տնտեսական շահերի տարբերություններն ու հակասությունները: Այս գործոնը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել փոխհարաբերությունները ազգային և միջազգային մակարդակներում:

Երկրում տարածված տնտեսական շահերը ձևավորում են ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին տնտեսական քաղաքականությունը:

Հասնելով տնտեսական շահերի հավասարակշռությանը մինիմալ կորուստներով, հնարավոր է յուրաքանչյուր երկրի կողմից հետևյալ սկզբունքներին հետևելու դեպքում՝ կայունություն, հուսալիություն և կանխատեսելիություն:

Ազգային մակարդակում տնտեսական անվտանգությունը կախված է նաև մի շարք այլ գործոններից, որոնք առաջացել են գոյություն ունեցող և մշտապես փոփոխվող տնտեսական շահերից: Այն է՝ հումքով և էներգիայով ապահովվածություն, սննամթերքով ապահովվածություն, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում, արտադրատեխնիկական և գիտական պոտենցիալով ապահովվածություն և այլն:

Տնտեսական անվտանգությունը ենթադրում է մի խումբ այնպիսի գործոններ, որոնք կարելի է խմբավորել ընդհանուր անվան տակ կամ մեկ չափանիշով՝ սպառնալիքներ, տնտեսական անվտանգության գործընթացներ: Դրանցից են շրջակա միջավայրը, բնական աղետները, միջազգային առևտրային համակարգի գործունեության մեխանիզմը, քաղաքական նպատակներում իրականացվող շրջափակումները և արգելքները, հումքի գների անկայունությունը, մասնավոր ֆինանսավորման համակարգը, ինչը հանգեցնում է պարտքային ճգնաժամի, քաղաքական պատճառներով սահմանափակումները, վարկային շուկաների մատչելիությունը, որոշումների կայացման մեխանիզմի անկատարությունը, ինչը խոչընդոտ է հանդիսանում արժեքային գործունեության համակարգի համար:

Կան գործոններ, որոնք ազդում են տնտեսական անվտանգության, վտանգների, սպառնալիքների և այլ կործանարար հանգամանքների վրա, որի արդյունքն էլ իր հերթին ազդում է հանրապետության ֆինանսատնտեսական համակարգի գործունեւթյան վրա: Կախված բիզնեսի զարգացման պայմաններից՝ գործոնների նշանակությունը կարող է փոխվել: Վտանգի և սպառնալիքի բոլոր գործոնները կարող են դասակարգվել տարբեր չափանիշներով: Այդ տեսակետից կարևոր է գտնել կանխատեսելի և անկանխատեսելի վտանգներն ու

սպառնալիքները:

Կախված կանխելու հնարավորությունից, առանձնացնում ենք ֆորս - մաժորային և ոչ ֆորս - մաժորային գործոններ: ֆորս - մաժորայինները տարբերվում են անհաղթահարելի ազդեցությամբ ( պատերազմներ, աղետներ և այլն ): Ոչ ֆորս - մաժորային գործոնները կարող են կանխվել ժամանակին և ճիշտ գործողությունների միջոցով:

Ըստ առաջացման հավանականության, բոլոր կործանարար գործոնները կարելի է բաժանել ակնհայտ և թաքնված գործոնների: Դրանք կարող են հայտնվել հանկարծակի, իրենց կանխումը պահանջում է ճշգրիտ միջոցառումներ, լրացուցիչ ջանքեր և միջոցներ:

Վտանգները և սպառնալիքները կարող են դասակարգվել նաև ըստ ազդեցության օբյեկտի՝ անձնակազմի, ունեցվածքի, տեխնիկայի, տեղեկատվության, տեխնոլոգիաների և այլն: Բացի այդ, ըստ իրենց առաջացման բնույթի կարելի է առանձնացնել քաղաքական, տնտեսական, տեխնիկական, իրավաբանական, էկոլոգիական և այլն:

Կորստի մեծության կամ վնասի չափից կախված վնասները և սպառնալիքները կարելի է բաժանել պատճառահետևանքային դժվարությունների, էական և աղետալի դժվարությունների:

Առանձնացնում են նաև սպառնալիքների ժամանակի հեռավորության հետևանքով՝ անմիջական, մոտիկ, հեռու և տարածության մեջ:

Տնտեսական անվտանգության գործոնների թվում առանձին տեղ է զբաղեցնում տնտեսական սպառնալիքների սուբյեկտների գործունեությունը, տնտեսական վնաս հասցնելու միջոցները և մեթոդները:

Մեծ սպառնալիք է ներկայացնում ներքին սուբյեկտների գործունեությունը, որը որոշ դեպքերում կանխում է տնտեսական շահերի իրականացումը: Այսպիսով տնտեսությանը վնաս է պատճառվում ինչպես տնտեսության բացերի հետևանքով,

այնպես էլ կոռուպացված կապերի տարածումով:

Կոռուպցիան ավելի շատ օգտագործվում է սեփական հարստացման համար, լուրջ վնաս հասցնելով հանրապետության շահերին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են արտաքին տնտեսական կապերը, ֆինանսական հարաբերությաունները և այլն:

Կոռուպցիայի ավելացման հետ ավելանում են ստվերային տնտեսությունները, օգտագործվում են բոլոր հնարավորությունները օրինականացնելու համար շուկայական հարաբերությունների վարչակազմի քողի տակ:

## 3.2 Տնտեսական անվտանգության մակարդակի ցուցանիշները

Տնտեսագիտական գրականության մեջ տնտեսական անվտանգության ցուցանիշների առավելագույն սահմանները խմբավորում են ըստ տնտեսության ոլորտների:

Առաջին խումբը միավորում է ազգային արտադրության զարգացման մակարդակը, երկրորդ խումբը՝ ֆինանսական և դրամավարկային իրավիճակը բնութագրող ցուցանիշները:

Տնտեսական անվտանգության ռազմավարության մշակման ժամանակ կարևոր է հաշվի առնել տեղային և գլոբալ սկզբունքները: Տեղայնության սկզբունքը ենթադրում է այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնք կարող են հակազդել ծագող տնտեսական վտանգավոր գործընթացներին և խթանել նրանց զարգացումը, իսկ գլոբալության սկզբունքը գործածվում է լոկալության սկզբունքի խախտման ժամանակ և ենթադրում է հետևանքների դեմ պայքարի լայնածավալ կազմակերպական միջոցառումների ստեղծում և դրանց իրականացում:

Ֆունկցիոնալ կողմնորոշվածության տեսանկյունից տնտեսական

անվտանգությունը կարող է մասնատվել ներքին և արտաքին տնտեսական պաշտպանողական մեխանիզմների: Արտաքին տնտեսական մեխանիզմը ենթադրում է տնտեսական համակարգի անվտանգության պայմանների ստեղծում: Կապը ներքին տնտեսական մեխանիզմի հետ իրականացվում է պետական բյուջեի միջոցներով: Այն պատասխանատվություն է կրում կայուն տնտեսական իրավիճակի ապահովման համար:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման բարդությունները սկսվում են աշխարհաքաղաքական անբարենպաստ դիրքից և ռազմավարական նշանակության բնական ռեսուրսներով ապահովվածության ցածր աստիճանից:

Հենց այս բարդությունների հաղթահարման և հանրապետության բնակչության գոյատևման և զարգացման խնդիրն է արդիական դարձնում Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման հնարավորությունների ուսումնասիրությունը, քանի որ յուրաքանչյուրի լուծումն ավելի դյուրին է լինում դրա տնտեսական բաղադրիչի ապահովվածության պայմաններում:

Հետազոտությունների հիմնական նպատակն է՝ միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա և Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության յուրաքանչյուր հատվածի կենսականորեն կարևոր ոլորտները բնութագրող որոշակի թվով ցուցանիշների միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի ձևավորումը և դրանց սահմանային կամ շեմային արժեքների որոշումը: Դա հնարավորություն կտա այդ ցուցանիշների սահմանային և փաստացի արժեքների տարբերության վերլուծության միջոցով բացահայտել և գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության սպառնալիքները, դասակարգել

դրանք և առաջարկել սպառնալիքների չեզոքացման կոնկրետ ուղիներ:

Հետազոտությունների հնարավոր է բացահայտել այն սպառնալիքները, որոնք կառաջանան հետագա տարիներին և որոշել դրանց սահմանային արժեքները Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության տեսանկյունից:

Գործնական նպատակներով կարող են օգտագործվել նաև ուսումնասիրության տեսական մասն ընդհանրացնող տնտեսական անվտանգության հասկացության զարգացումների վերաբերյալ եզրակացությունները: Սա հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության տնտեսության տարբեր ոլորտներում երկարաժամկետ ծրագրերի, մշակման տեսանկյունից:

Տնտեսական անվտանգության ապահովումը պետության կարևորագույն գործառույթներից է: Հարցով զբաղվող գիտնականների մեծամասնությունը եզրակացնում է, որ տնտեսական անվտանգություն կապահովվի, եթե միաժամանակ և ճիշտ գնահատվեն դրա հիմնական տարրերը՝ խոցելիության աստիճանը և սպառնալիքի իրականացման հնարավորությունը:

Խոցելիությունն անհրաժեշտ է հասկանալ որպես գործընկերների միջև այնպիսի կախվածություն, որի դեպքում արտաքին տնտեսական հարաբերությունների վատթարացումը առաջացնում է հարմարվելու հետ կապված այնպիսի ծախսեր, որոնք տվյալ երկրի տնտեսությունն ի վիճակի չէ կրել:

Տնտեսական անվտանգություն հասկացությունը կառավարման և կարգավորման գործընթաց է ՙ ներմուծում ՚ տնտեսական ցուցանիշների և չափանիշների համակարգի միջոցով:

Շեմային ցուցանիշների մակարդակը գերազանցելու կամ դրանցից շեղվելու դեպքում երկրի տնտեսական անվտանգության հիմնախնդիրների լուծումը դառնում է հրատապ: Այստեղ կարևոր դեր են խաղում վիճակագրական

տվյալների առկայությունը և դրանց որակը: Որպես տնտեսական անվտանգության շեմային մեծություն կարելի է ընդունել միջին համաշխարհային ցուցանիշները:

Տնտեսական անվտանգությունն առավելագույնս ապահովված է, եթե բավարարված են բոլոր ցուցանիշների շեմային մեծությունները: Բոլոր շեմային մեծությունները գործնականում միաժամանակ կարելի է ապահովել միայն տնտեսության բարձր զարգացածության պայմաններում:

Շեմային ցուցանիշների մեծությունները պետք է ուղղորդվեն, շտկվեն ժամանակի հետ և վայրի գործոններով:

Պետությունը, շեմային ցուցանիշների մեծություններ հիմնավորելուց հետո, պետք է ստեղծի մեխանիզմներ, որոնք կապահովեն երկրի տնտեսական անվտանգությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել օրենսդրաիրավական, տնտեսական, վարչական բնույթի միջոցառումների համալիր, որի իրականացման նպատակն այնպիսի իրավիճակների կանխումն է, երբ փաստացի և կանխատեսվող ցուցանիշ – ինդիկատորների մեծությունները շեղվում են դրանց շեմային մեծություններից անցանկալի ուղղությամբ և չափերով: Որպեսզի այս ամենը ահազանգ չհանդիսանա տնտեսության այս կամ այն ոլորտում կամ ճյուղում տեղի ունեցող անցանկալի երևույթների վերացման համար, անհրաժեշտ է կատարել համակարգված մոնիթորինգ՝ պարզելու համար, թե տնտեսական անվտանգության ցուցանիշներն ինչ որակական վիճակում են գտնվում:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների մոնիթորինգի նպատակն է տնտեսական քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմիններին ժամանակին տեղեկացնել վտանգավոր իրավիճակի մասին, եթե տնտեսությունը գործում է անվտանգությանը բավարարող ցուցանիշների շրջանակում: Իսկ եթե քաղաքականությունը ուղղված է այդ ցուցանիշներին հասնելուն, մոնիթորինգի նպատակն է վերահսկել անվտանգության ցուցանիշների տեմպերը և

ուղղությունները:

Տնտեսական անվտանգության մոնիթորինգի նպատակն է արձանագրել իրական սպառնալիքների վերացումը կամ դրանց հավանականությունը և հակառակը:

Մոնիթորինգի կարևորությունը կարելի է նաև մեկնաբանել ժամանակային լագի տեսանկյունից: Մոնիթորինգը թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել տնտեսական քաղաքականությունը:

Զարգացող երկրների համար ընդունելի է տնտեսական անվտանգության և նրա ցուցանիշների այն հասկացությունը, ըստ որի երկրի տնտեսական անվտանգությունը տնտեսական, քաղաքական և իրավական պայմանների այնպիսի համակցություն է, որն ապահովում է երկարաժամկետ հատվածում բնակչության մեկ շնչի հաշվով տնտեսական ռեսուրսների առավելագույն քանակության արտադրության կայուն տեմպեր՝ ամենաարդյունավետ միջոցներով:

Երկրի զարգացման տնտեսական ու սոցիալական բնութագրերը կանխորոշող կարևոր գործոն է նրա տնտեսական զարգացման մակարդակը, որը, որպես կանոն, որոշվում է բնակչության մեկ շնչի հաշվով արտադրվող ՀՆԱ մեծությամբ: Այս ցուցանիշի մեծությունից զգալիորեն կախված են բնակչության կենսամակարդակը, կյանքի որակը և տևողությունը, առողջության վիճակը, սնման որակը, կրթական մակարդակը, երկրի և հասարակության ֆինանսական հնարավորությունները՝ բնակչության սոցիալական պաշտպանվածությունն ապահովելու համար, գիտության, արվեստի, մշակույթի զարգացումը և այլն: Ուստի, տնտեսական զարգացման մակարդակը տնտեսական անվտանգության վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է:

Տնտեսական աճը, որը բնութագրվում է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ հավելաճի կամ նվազման տեմպերով, տնտեսական անվտանգության կարևորագույն ցուցանիշն է:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների հիմնական խմբերը և յուրաքանչյուր խմբում ընդգրկված ցուցանիշների համակարգն ունեն հետևյալ բովանդակությունը՝

1. Ընդհանուր տնտեսական ներուժը բնութագրող ցուցանիշներ՝

ա) ՀՆԱ ծավալը՝ բացարձակ մեծությունը, մեկ շնչին ընկնող մեծությունը՝ սահմանակից երկրների, ռազմավարական մրցակիցների և գործընկեր երկրների, միջին համաշխարհային մակարդակի համեմատ,

բ) ՀՆԱ կառուցվածքը՝ սպառման, կուտակման և այլն,

գ) ստվերային տնտեսության ծվալների գնահատումը.

դ) ներդրումների ծավալները ՀՆԱ - ում և դրանց անհրաժեշտ նվազագույն մեծությունը,

ե) արդյունաբերական արտադրության ծավալները՝ ընդհանուր և մեկ շնչին ընկնող ծավալները:

2. Պաշտպանունակության տնտեսական ապահովվածությունը բնութագրող ցուցանիշներ՝

ա) ռազմական ծախսերի բաժինը ՀՆԱ – ում՝ տոկոսային հարաբերությամբ և հիմնական, առաջին հերթին՝ հարևան երկրների աշխարհաքաղաքական մրցակիցների ծախսերի համեմատ,

բ) ռազմաարդյունաբերական համալիրի հզորությունները,

գ) ռազմական ուժերի հագեցվածությունն առաջադեմ տեխնիկայով,

դ) ռազմական ներքին կարիքների բավարարման մասը ներմուծման հաշվին,

ե) ռազմական արդյունաբերության գիտական ապահովվածությունը, մասնավորապես նվազագույն անհրաժեշտ ծախսերը և կատարվող ծախսերը, այդ թվում՝ հարևան երկրների, հիմնական աշխարհաքաղաքական հակառակորդների ծախսերի համեմատ:

3. Տնտեսության ինքնուրույն զարգանալու հնարավորությունները բնութագրող ցուցանիշներ՝

ա) պետական բյուջեի ծախսումները գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար՝ մեկ շնչին ընկնող մեծությունը և տոկոսներով ՀՆԱ նկատմամբ,

բ) հիմնարար և կիրառական գիտությունների վիճակը բնութագրող ցուցանիշներ,

գ) մարդկային ներուժի վիճակը, այդ թվում՝ բնակչության թվի մեջ բարձրագույն կրթություն ունեցող անձանց տոկոսը և հազար մարդու հաշվով ուսանողների թիվը,

դ) մրցունակության մակարդակը,

ե) կուտակման նորմը՝ արագ զարգացող երկրների նույնատիպ ցուցանիշների համեմատ,

զ) մտավոր ներուժի պաշտպանվածությունը՝ ՙ ուղեղների ՚ արտահոսքի ծավալները և լիցենզիոն առևտրի հաշվեկշիռը,

է) կենսակարևոր արտադրատեսակների և ծառայությունների արտադրությունը թույլատրելի նվազագույն մակարդակի համեմատ՝ մեկ շնչին ընկնող պարենային ապրանքներ, էներգակիրներ, տրանսպորտային միջոցներ, հեռակապի և այլ միջոցներ, հեռակապի և այլ միջոցներ,

ը) պետական պահուստների չափը և նրանց անհրաժեշտ նվազագույն մեծությունը,

թ) արտադրական կարողությունների վիճակը՝ հիմնական միջոցների մաշվածության աստիճանը, արտադրվող արտադրանքի տեխնիկական մակարդակը, ռեսուրսախնայողությունը, հայտնագործությունների ընդհանուր թիվը, նոր տեսակի արտադրություններին բաժին ընկնող մասը ՀՆԱ – ում,

ժ) մեկ միավոր արժեքի հաշվով հարկային բեռը,

ժա) արտադրության ժավալի առանձգականությունը՝ կախված ուղղակի և անուղղակի հարկերից,

ժբ) վերանորոգման և վերականգնման ծառայությունների կարողությունները,

ժգ) շինարարական կազմակերպությունների կարողությունները նվազագույն անհրաժեշտ մեծության համեմատ:

4. Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներ՝

ա) բնակչության մեջ նվազագույն կենսամակարդակն ապահովող եկամտից ցածր ստացող մարդկանց տոկոսը,

բ) բնակչության տաս տոկոս ամենաբարձր եկամուտ ստացող խմբի և տաս տոկոս ամենացածր եկամուտ ստացող խմբի եկամուտների տարբերությունը,

գ) սոցիալապես պայմանավորված հիվանդությունների դինամիկան,

դ) սոցիալական երաշխիքների տնտեսապես ապահովվածությունը՝ ծախսերը առողջապահության համար և ծախսերը մշակույթի համար,

ե) գործազրկությունը տնտեսությունում ամբողջովին և ըստ տարածաշրջանների,

զ) հիմնական պարենային և ոչ պարենային ապրանքների սպառումը, բնակարանով ապահովվածությունը,

է) կյանքի միջին տևողությունը,

ը) մանկամահացությունը,

թ) մեկ միավոր աշխատավարձին ընկնող հարկային բեռը:

5. Ֆինանսական համակարգի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները՝

ա) ինֆլյացիայի մակարդակը,

բ) ներքին պարտքի ծավալներն ամբողջովին, ՀՆԱ համեմատ և մեկ

շնչին ընկնող մեծությունը,

գ) ոսկու և արտարժույթի պաշարների մեծության հարաբերակցությունն արտաքին առևտրի ծավալին,

դ) բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ համեմատ՝ արտահայտված տոկոսներով,

ե) ՀՆԱ – ում դրամական ծավալի չափաբաժինը,

զ) արտարժույթի ծավալի հարաբերությունը դրամական ծավալին,

է) կանխիկ դրամի ծավալի հարաբերությունը դրամական ծավալին,

ը) անկանխիկ ձևով կատարված գործարքների ծավալն ընդհանուր գործարքների մեջ,

թ) ժամկետանց վճարումների ծավալը բյուջե և բյուջեից դրանց հարաբերությունը ՀՆԱ – ին՝ արտահայտված տոկոսներով,

ժ) անհուսալի վարկերի մասնաբաժինը բանկերի ակտիվներում,

ժա) տնտեսության իրական հատվածին տրամադրված վարկերի մասնաբաժինը:

6. Արտաքին տնտեսական անկախությունը բնութագրող ցուցանիշներ՝

ա) զուտ արտահանման դեֆիցիտի չափերը,

բ) կարևորագույն արտադրատեսակների սպառման մեջ ներմուծվող ապրանքների մասնաբաժինը,

գ) հայրենական արտադրության հասարակական սպառման ապրանքների ծավալից արտահանվող արտադրանքի ծավալի չափը,

դ) ներքին գների հարաբերությունը ապրանքների գնողունակության համարժեքին,

ե) արտահանվող կապիտալի ծավալի հարաբերությունը՝ ներքին ներդրումների ծավալներին և ՀՆԱ – ին,

զ) օտարերկրյա կազմակերպությունների կողմից վերահսկման ծավալները՝ ապրանքների և ծառայությունների արտադրության ճյուղերում և բնական

ռեսուրսների արդյունահանման ոլորտում:

7. Տնտեսական անվտանգության կառավարչական դրույթները բնութագրող ցուցանիշներ՝

ա) տնտեսական գործընթացների կառավարելիությունը՝ սոցիալ – տնտեսական ծրագրերի տարեկան կանխատեսումների համապատասխանությունը իրական արդյունքներին, բյուջեի եկամտային մասի կատարումը, տնտեսական անվտանգության չափանիշների ապահովման մակարդակը,

բ) իշխանության գործադիր մարմինների աշխատանքի որակը՝ բյուջեի ծախսային մասի կատարումը և գնահատականը, բնակչության և տնտեսվարող սուբյեկտների առջև ունեցած պետական պարտավորությունների կատարումը,

գ) պետության հսկողության մակարդակը համապատասխան տնտեսական գործունեության ոլորտներում՝ մենաշնորհների, պետական հատվածի և անօրինական բիզնեսի նկատմամբ,

դ) տնտեսական ոլորտների և տնտեսական գործընթացների ցանկը, որոնք արտակարգ իրավիճակներում պահանջում են անմիջական պետական կառավարում ու կարգավորում և դրանց իրավական և կազմակերպչական պայմանների առկայությունը,

ե) իշխանությունների օրենսդրական և կազմակերպչական հնարավորությունները:

Վերոնշյալ ցուցանիշների շեմային մեծությունները որոշվել են միջազգային փորձի հիման վրա: Դրանց մեծ մասը կիրառելի է բոլոր երկրների համար՝ անկախ նրանց զարգացման աստիճանից: Տնտեսական անվտանգության որոշ շեմային մեծություններն այս կամ այն երկրի համար կարող են տարբեր լինել միայն բնակլիմայական պայմանների, պատմական զարգացման, ժողովրդագրական ցուցանիշների և սովորույթների տարբերությունների

պատճառով՝ այն էլ տնտեսական անվտանգության սահմանափակ թվով ցուցանիշների համար:

Որպես տնտեսական անվտանգության կարևորագույն ցուցանիշներ, որոնք հաճախ են օգտագործվում արտասահմանյան փորձագետների կողմից, կարելի է նշել հետևյալները՝

Տնտեսական

1. ՀՆԱ ծավալի կրճատումը բազային տարվա նկատմամբ՝ արտահայտված տոկոսներով,
2. պարենային կախվածություն,
3. արտահանման ծավալի մեջ բարձր տեխնոլոգիաների մասնաբաժինը,
4. գիտությանն ուղղված հատկացումները:

Սոցիալական

1. նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը,
2. դեցիլային գործակից,
3. կենսաապահովման նվազագույնի և միջին եկամտի հարաբերությունը,
4. գործազրկության մակարդակը,
5. ծնվածների և մահացածների հարաբերակցությունը մեկ տարվա կտրվածքով:

Քաղաքական

1. իշխանության օրինական մակարդակը:

Տնտեսական անվտանգության բոլոր ցուցանիշները բաժանվում են երեք խմբի՝ համեմատվող, բացարձակ և համամասնական:

Համեմատվող ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են՝ համեմատության մեջ դրվելով տարածաշրջանային հիմնական մրցակիցների նույն ցուցանիշների մեծությունների հետ: Համամասնական ցուցանիշներն արտահայտում են տնտեսական անվտանգության համակարգի տարբեր

բաղադրիչների համամասնությունը, որոնք ապահովում են համակարգի կայունությունը՝ անկախ տնտեսության զարգացման այս կամ այն վիճակից: Բացարձակ ցուցանիշների շեմային մեծությունները որոշվում են բնակչության կենսական բնական հատկանիշներով և կախված են հասարակության ներսում ձևավորված ավանդույթներից, սովորույթներից, ինչպես նաև բնակլիմայական պայմաններից:

## 3.3. ՀՀ տնտեսական անվտանգության առանձնահատկությունները

Հարավկովկասյան երեք հանրապետությունների տնտեսական անվտամգության ցուցանիշների կազմի, սահմանային արժեքների և ըստ վտանգավորության աստիճանի դրանց դասակարգումը հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես մի շարք ընդհանրություններ, այնպես էլ որոշակի առանձնահատկություններ:

Որպես երեք հանրապետությունների բնորոշ ընդհանրություններ կարելի է նշել.

ա) աղքատության ցուցանիշների ՙ բնական ՚ մակարդակին բազմակի գերազանցող փաստացի մակարդակները: Այդ ցուցանիշներով երեք հանրապետություններն էլ գտնվում են վտանգավորության ամենաբարձր՝ իններորդ աստջիճանում,

բ) վտանգավորության ամենաբարձր՝ իններորդ աստիճանում է գտնվում նաև ինֆլյացիայի միջին մակարդակը,

գ) Ջինիի գործակցի ցուցանիշով Հայաստանը և Վրաստանը գտնվում են վտանգավորության իններորդ, ադրբեջանը՝ ութերորդ աստիճանում,

դ) երեք հանրապետություններն էլ վտանգավորության ութերորդ աստիճանում են գտնվում տնտեսական աճի և ՀՆԱ – ում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշռով,

ե) կյանքի սպասվելիք տևողության և ներքին սպառման մեջ ներմուծման տեսակարար կշռով Հայաստանը և ադրբեջանը գտնվում են վտանգավորության ութերորդ, Վրաստանը՝ վեցերորդ տեղում,

զ) տնտեսական անվտանգության բարձր աստիճան ունի ՀՆԱ նկատմամբ արտաքին պարտքի ցուցանիշը Հայաստանում ( ութերորդ ) և Վրաստանում ( ութերորդ ), ադրբեջանն այդ ցուցանիշով վեցերորդ տեղում է,

է) երեք հանրապետություններն էլ վտանգավորության միևնույն՝ չորրորդ աստիճանում են գտնվում մեկ շնչի հաշվով ՀՆԱ ցուցանիշով, արդյունաբերական արտադրության մեջ մեքենաշինության տեսակարար կշռով, ինչպես նաև հանցագործության մակարդակի ցուցանիշով:

Նշված քսան ցուցանիշներին ավելի շատ հատկանշական են ընդհանրությունները, ինչը վկայում է Հարավկովկասյան հանրապետությունների զարգացման ընդհանուր հիմնախնդիրների բնույթի մասին:

Տնտեսական անվտանգության մնացած ցուցանիշները վտանգավորության աստիճանով առանձին հանրապետություններում ունեն իրենց առանձնահատկությունները: Օրինակ, ՀՆԱ նկատմամբ ներքին պետական պարտքի ցուցանիշը վտանգավորության աստիճանով Հայաստանի համար գտնվում է ամենաանվտանգ տեղում, մինչդեռ այդ ցուցանիշը Վրաստանում ամենավտանգավորներից է: Կամ ՀՆԱ նկատմամբ բյուջեի պակասուրդի ցուցանիշը ադրբեջանում գտնվում է առաջին խմբում, իսկ Հայաստանում՝ ութերորդ:

Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների դասակարգումից հետևում է, որ ամենավտանգավոր առաջին երեք ցուցանիշները եղել են Ջինիի գործակիցը, ինֆլյացիայի միջին մակարդակը և աղքատության ցուցանիշը: Եկամուտների բևեռացման և աղքատության ցուցանիշները Հարավկովկասյան երեք հանրապետություններում

էլ գտնվում են վտանգավորության ամենաբարձր աստիճանում և, հետևաբար, դրա վրա պետք է սևեռվի երեք հանրապետություններում իրականացվող, հատկապես սոցիալական քաղաքականությունը: Այս տեսանկյունից զգալի հետաքրքրություն է առաջացնում նշված հանրապետություններում եկամուտների ( արդյունքի ) գնահատման և օգտագործման հիմնահարցերի ուսումնասիրությունը: Այս համատեքստում հետաքրքրություն են ներկայացնում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում սննդի սպառման չափերի վերաբերյալ տվյալները:

Ըստ բարեկեցության մակարդակի երկրի բնակչությունը բաժանվում է երեք խմբի.

1. Ոչ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով բարձր են կենսամակարդակը գնահատող ֆիքսված մեծությունից:

2. Աղքատ է համարվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են կենսամակարդակը գնահատող ֆիքսցած մեծությունից:

3. Շատ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են աղքատության գծից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շատ աղքատ բնակչության մակարդակը նվազում է առավել արագ տեմպերով:

Սա կարելի է բացատրել երկու գործոնների ազդեցությամբ՝ դրական և բացասական: Որպես դրական գործոն կարելի է նշել պետության նպատակաուղղված սոցիալական քաղաքականությունը և վերջինիս հասցեականության բարելավումը: Բացասական գործոն է պարենային զամբյուղի ցածր արժեքը, որը չի ապահովում մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ մակարդակը, բայց հաշվարկների ժամանակ հանգեցնում է շատ

աղքատ բնակչության առավել արագ տեմպերով կրճատմանը: Սակայն շատ աղքատ բնակչության համամասնության նվազումը կատարվում է աղքատ բնակչության մի մասի անցման հաշվին: Դա վկայում է աղքատ բնակչության համամասնության դինամիկան, որը բարձրանում է շատ աղքատ բնակչության համամասնության նվազման հաշվին:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ աղքատության տեսակետից առավել խոցելի խմբերն են բազմանդամ, անչափահաս երեխա ունեցող և կնոջ գլխավորությամբ ընտանիքները: Հանրապետությունում սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող սոցիալական օգնության պետական ամենամեծ ծրագիրն աղքատ ընտանիքներին տրվող ընտանեկան նպաստն է:

Պետության մշտական ուշադրության կենտրոնում պետք է լինեն նաև տարեց բնակչության, հաշմանդամների և երեխաների հիմնախնդիրները:

Թեև հանրապետությունում սննդամթերքի գծով ներմուծման կախվածության ցուցանիշը գտնվում է անվտանգ վիճակում, բայց անհանգստացնող է բնակչության կարևորագույն սննդամթերքների սպառման շեղումը նրանց սահմանված նորմերից:

Մեր պետությունը պետք է հետևողական լինի բնակչության պարենային անվտանգության ապահովման գործում: Ըստ ՙ Պարենային անվտանգության մասին ՚ ՀՀ օրենքի՝ կառավարությունը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, երաշխավորում է սնվելու ֆիզիոլոգիական նորմերի մակարդակով քաղաքացիների լիարժեք սնման և սովից զերծ լինելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է պետության պարենային անվտանգությունը, այդ թվում՝ երկրում սննդամթերքի արտադրության անհրաժեշտ ծավալը, պետական պարենային պահուստի առկայությունը, վերականգնումը և համալրումը՝ անկախ ներքին և արտաքին անբարենպաստ գործոնների ազդեցությունից, սպառողներին առաքվող սննդամթերքի որակի համապատասխանությունը ստանդարտների պետական

համակարգի պահանջներին:

Պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե կենսապես կարևոր սննդամթերքների տեղական տարեկան արտադրության ծավալը գերազանցում է սնվելու ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան կազմված նմանատիպ ապրանքների՝ բնակչության տարեկան սպառման երկու երրորդը: Պարենային անվտանգության ապահովման պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Պարենային մթերքների արտադրության անհրաժեշտ և փաստացի մակարդակների հաշվեկշիռը կազմվում է յուրաքանչյուր տարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Պարենային անվտանգությանն սպառնացող արտաքին վտանգն արտահայտում է արտաքին ուժերի ձգտումը՝ պահպանել Հայաստանի Հանրապետության կարգավիճակը որպես սննդամթերքի ներմուծող երկիր, խթանել նրա մուտքը համաշխարհային շուկա և նրա մասնակցությունը միջազգային առևտրային համագործակցությանը, նրա առաջնային տեխնոլոգիաների կիրառմանը և օգտագործմանը:

Պարենային անվտանգությանը սպառնացող ներքին և արտաքին վտանգի քանակական և որակական որոշման հիմնական մեթոդը փորձագետների գնահատականն է, համաշխարհային փորձի օգտագործումը՝ հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծության արդյունքում բացահայտվել են ավելի քան հիսուն տարբեր ինդիկատորներ, որոնք բնութագրում են պարենային անվտանգության վիճակը՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը և երկրի առանձնահատկությունը:

Բավական անհանգստացնող են բնակչության ժողովրդագրական ցուցանիշները և դրանց բացասական միտումները:

Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական անվտանգության նկատմամբ հիմնական սպառնալիք է բնակչության արտահոսքը, որն առաջացնում է ոչ միայն քանակական, այլև որակական բնույթի փոփոխություններ:

Արտագաղթը՝ որպես ազգային անվտանգության սպառնալիք, Հայաստանի համար առավել հաշվարկելի է դառնում, երբ ուսումնասիրվում են Հարավային Կովկասի մյուս երկու հանրապետություններից տեղի ունեցած արտագաղթը և Հայաստանում բարիքներ ստեղծող ու պետական օժանդակության կարիք զգացող անձանց հարաբերակցությունը:

Կան երկու կարևոր հիմնախնդիրներ.

1. Հայաստանում և ադրբեջանում բնակչության վերարտադրության հարաբերակցությունը, որն, ի դեպ, ի օգուտ Հայաստանի չէ,

2. ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղիները:

Բնակչության դրամական եկամուտների ձևավորման գործում մեծ դեր են խաղում մեր հայրենակիցների կողմից Հայաստան ուղարկվող դրամական միջոցները: Արտաքին միջոցներից կախվածության հանգամանքը տնտեսական անվտանգության տեսանկյունից վտանգավոր է այնքանով, որ արտասահմանյան երկրների կողմից խիստ միգրացիոն քաղաքականություն վարելու դեպքում այդ միջոցների կրճատումը մեր երկրում կհանգեցնի ճգնաժամային երևույթների: Դրսից ստացվող միջոցներից կախվածությունը անմիջապես երևում է արտաքին տնտեսական գործունեության ֆինանսավորման ժամանակ, քանի որ զուտ արտահանումը գերազանցում է խնայողությունները:

# ԳԼՈՒԽ 4

## 4.1 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման նպատակը գների կայուն մակարդակի ապահովումն է, որն էլ համարվում է շատ երկրների ԿԲ - երի գործունեության հիմնական առանցքը և խնդիրը: Գնաճի ցածր և կայուն մակարդակը շուկայական տնտեսության պայմաններում տնտեսական աճի ապահովման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, երկրի տնտեսության մակրոտնտեսական կայունության ապահովման կարևոր նախադրյալ է, որը ունի որոշիչ դեր տնտեսական անվտանգության ապահովման գործում: Գնաճի մակարդակի վրա ուղղակի ազդեցություն ունի իրականացվող դրամավարկային քաղաքականությունը, որը, ի տարբերություն տնտեսական մյուս քաղաքականությունների, ամենաճկունն է և արդյունավետը երկրի տնտեսությունում կարճ և միջին ժամկետ մակրոտնտեսական կայունության ապահովման համար: Դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման արդյունավետությունը մեծապես կախված է դրամավարկային քաղաքականության ընտրած ռազմավարությունից և վերջինիս իրագործման նպատակով ԿԲ - ի կողմից իրականացվող գործողությունների հետևողականությունից: Դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքը կարելի է ներկայացնել հետևյալ հերթականությամբ՝ գործիքներ, գործառնական նպատակ, միջանկյալ նպատակ, վերջնական նպատակ:

Դրամավարկային քաղաքականության միջանկյալ և վերջնական նպատակները, բնութագրում են դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, իսկ դրամավարկային քաղաքականության գործիքները և

գործառնական նպատակը, բնութագրում են վերջինիս իրագործման մարտավարությունը: Շուկայական հարաբերությունների պայմաններում դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակները դուրս են ԿԲ - ի անմիջական վերահսկողությունից, և դրանց վրա վերջինիս ազդեցությունը կրում է անուղղակի բնույթ: Դրամավարկային քաղաքականության գործիքների միջոցով ԿԲ - ը վերահսկում է գործառնական և միջանկյալ նպատակների վարքագիծը, որն էլ արտացոլվում է վերջինիս վերջնական նպատակների ցուցանիշում: Մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով կարևոր է նաև դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների արդյունավետ համադրումը, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի իրագործումը չբերի մյուսի արդյունքների չեզոքացմանը, այլ նպաստի ընդհանուր նպատակների իրագործմանը:

Հաշվի առնելով, որ դրամավարկային քաղաքականությունը տնտեսության պետական կառավարման հիմնական մեխանիզմներից մեկն է, նրա նպատակները համընկնում են պետության տնտեսական քաղաքականության հիմնական նպատակների հետ. գների կայուն մակարդակի ապահովում, զբաղվածության բարձր մակարդակ, իրական ՀՆԱ - ի արագ աճ, կայուն վճարային հաշվեկշիռ:

Հիմնախնդիրն այն է, որ ԿԲ - ը հնարավորություն չունի այդ փոփոխականների անմիջական կառավարումը իրականացնել: Այդ նպատակներին հասնելու համար ԿԲ - ն ընտրում է միջանկյալ և գործառնական նպատակներ, որոնք ենթակա են նրա ներազդմանը:

Միջանկյալ նպատակներն են՝

- դրամական զանգվածի կարգավորում,
- տոկոսադրույքի կարգավորում,
- արտարժույթային կուրսի կարգավորում:

Արևմտյան տնտեսագիտական գրականությունում գոյություն ունի կարծիք, համաձայն որի՝ միջանկյալ նպատակները չեն վերաբերվում ոչ ԿԲ - ի դրամավարկային քաղաքականության գործիքներին, ոչ էլ այդ քաղաքականության իրական նպատակներին, բայց իրենցից ներկայացնում են, այսպես կոչված, հաղորդիչ մեխանիզմում ԿԲ - ի գործիքները և նպատակները միացնող միջին օղակներ:

Անվանական խարիսխը քաղաքականության ցուցանիշ է, որը հրապարակվում է որպես վերջնական կարգավորման ենթակա տնտեսական երևույթ արտահայտող ցուցանիշ: Այն սերտ և ամուր կապի մեջ պետք է լինի դրամավարկային քաղաքականություն վերջնական նպատակի հետ և դրան հասնելու օժանդակ միջոց է: Անվանական խարիսխի կամ, որ նույնն է, միջանկյալ նպատակի ընտրության հարցում ԿԲ - ը հենվում է մի շարք չափանիշների վրա: Կարևորագույն չափանիշը այն է, որ դրամավարկային քաղաքականություն միջանկյալ նպատակը պետք է համապատասխանեցվի դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակին: Դրամավարկային քաղաքականության միջանկյալ նպատակը պետք է բավարարի չափելի լինելու հատկանիշին: Այսինքն ԿԲ - ն պետք է միջանկյալ նպատակի մակարդակը ժամանակի յուրաքանչյուր պահին ճշգրտորեն չափելու և դրա վարքագծին հետևելու հնարավորություն ունենա: ԿԲ - ն պետք է միջանկյալ նպատակի վերաբերյալ ժամանակին ճշգրիտ տեղեկատվություն ստանալու հնարավորություն ստանա: Ընդ որում, միջանկյալ նպատակի վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը վերջնական նպատակի համեմատությամբ պետք է ունենա ավելի մեծ հաճախականություն, որպեսզի ԿԲ - ն առավել արդյունավետ կառավարի միջանկյալ նպատակը վերջնական նպատակի ցանկալի մակարդակին հասնելու համար: Եվ վերջապես միջանկյալ նպատակը պետք է ԿԲ - ի համար վերահսկելի լինի: ԿԲ - ի կողմից ընտրված

դրամավարկային քաղաքականություն միջանկյալ նպատակը պետք է առավելագույնս բավարարի վերոնշյալ չափանիշներին: Ազգային տնտեսություններում դրամավարկային քաղաքականության « անվանական խարիսխի դեր են կատարում փողի ագրեգատները, փոխարժեքը, իսկ 1990 – ական թվականների սկզբից նաև գնաճի կանխատեսվող մակարդակը, որոնց ներքո իրականացվող դրամավարկային ռազմավարությունը համապատասխանաբար անվանվում է փոխարժեքի, փողի ագրեգատների և գնաճի նպատակադրման ռազմավարություն:

Իրենց հիմնական խնդիրն իրագործելու նպատակով կենտրոնական բանկերը կարող են ընտրել դրամավարկային քաղաքականության իրականացման տարբեր ռազմավարություններ, որոնք տարբեր ձևով կարող են արտահայտվել տնտեսական անվտանգության ոլորտներում: Ներկայումս առավել լայն կիրառություն ունեցող ռազմավարություններն են՝

- փողի ագրեգատների նպատակադրումը,
- փոխարժեքի նպատակադրումը,
- գնաճի նպատակադրումը:

Փողի ագրեգատների նպատակադրումը ենթադրում է փողի ագրեգատների քանակական սահմանափակումներ՝ վերջնական նպատակի՝ գների կայունության համար: Այն բավականին արդյունավետ ռազմավարություն է անցումային շրջանում գտնվող տնտեսությունների համար, որտեղ անխուսափելի են առաջարկի, պահանջարկի շոկերը, հնարավոր չէ գնահատել տնտեսական աճի համար անհրաժեշտ գնաճի բեկումնային մակարդակը ( որից բարձրի դեպքում գնաճն արդեն նվազեցնում է տնտեսական աճի տեմպերը ): Փողի ագրեգատների մակարդակի կառավարման միջոցով հնարավոր է ճկուն արձագանքել տնտեսությունում փոխարժեքի և տնտեսական աճի կարճաժամկետ տատանումներին, իսկ

գների կայունությունը ձևավորվում է արդեն մակրոտնտեսական որոշակի հաշվեկշռվածության ձեռքբերումից հետո:

1994 թվականին ՀՀ կենտրոնական բանկը, որպես դրամավարկային կարգավորման ռազմավարություն էր ընտրել փողի ագրեգատների նպատակադրումը:

Դրամավարկային քաղաքականության կարգավորման այս մոտեցումներն ամրագրված են գնաճի կայուն և ցածր մակարդակը գլխավոր նպատակ սահմանող « Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքով ( 1996 ): Սակայն այս ռազմավարության հաջող իրականացման շարունակական բնույթը կախված է մի շարք հանգամանքներից:

Նախևառաջ անհրաժեշտ է գնաճի և փողի ագրեգատների միջև կայուն կապի առկայություն, որպեսզի փողի ագրեգատների նպատակային ցուցանիշի ապահովմամբ ձեռք բերվի գնաճի նպատակային ցուցանիշը: Հակառակ պարագայում խնդիրներ կառաջանան: Օրինակ, եթե օրենսդրի կողմից գնաճի որոշակի ցուցանիշով ամրագրված գների կայունությանը հասնելու խնդրի առաջնայնությունից ելնելով ԿԲ - ն հաճախակի վերանայում է փողի ագրեգատների նպատակային ցուցանիշը, ապա վտանգվում է ԿԲ - ի կողմից հայտարարվող դրամավարկային քաղաքականության ծրագրերի վարկը հասարակության շրջանում:

Մյուս կարևոր նախապայմանը ԿԲ կողմից փողի ագրեգատների լիարժեք կառավարման հնարավորությունն է: Սովորաբար ԿԲ - ները հաջողությամբ կառավարում են փողի բազայի ցուցանիշը, սակայն դժվարություններ են առաջանում փողի զանգվածի կառավարման հարցում: Զարգացող ֆինանսական շուկաներ և դոլարայնացման բարձր մակարդակ ունեցող երկրներում, որտեղ հնարավոր են վարկերի և ավանդների նկատմամբ պահանջարկի, ինչպես նաև փողի զանգվածի կառուցվածքի, դոլարայնացման

մակարդակի զգալի փոփոխություններ, էական տատանումների է ենթարկվում փողի նկատմամբ պահանջարկը, և նվազում է կանխատեսելիության աստիճանը: Այդ երկրներում ցածր է նաև տոկոսադրույքներից փողի պահանջարկի կախվածության առաձգականությունը, որը դժվարացնում է ԿԲ կողմից փողի զանգվածի կառավարման գործընթացը: Նշված հիմնախնդիրների պայմաններում առաջանում է միջանկյալ նպատակի՝ փողի զանգվածի նպատակային ցուցանիշից հաճախակի շեղման խնդիր՝ կրկին վտանգելով դրամավարկային ծրագրերի և ԿԲ վարկը:

Բաց տնտեսություններում փոխարժեքը մի կողմից իր ազդեցությունն է ունենում մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վարքագծի վրա, մյուս կողմից, որպես գնային գործոն, մշտապես փոփոխվում է մակրոտնտեսական հավասարակշռության ձևավորման գործընթացում: Միաժամանակ, փոխարժեքը, որպես երկրի ներքին արժույթի արտաքին գին, փոփոխվում է ինչպես ներքին և արտաքին արժույթների քանակական, այնպես էլ դրանց ներքին գնային՝ տոկոսադրույքների փոփոխություններից՝ հայտնվելով դրամավարկային քաղաքականության ուղղակի ազդեցության ներքո: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մակրոտնտեսական հավասարակշռության կայունության ապահովումը հիմականում գտնվում է կենտրոնական բանկերի կարգավորման դաշտում, փոխարժեքի վարքագիծը առավելապես պայմանավորված է դրամավարկային քաղաքականության նպատակների սահմանմամբ և դրանց ապահովմանն ուղղված համապատասխան ռազմավարությունների ընդունմամբ:

Փոխարժեքի նպատակադրման ռազմավարության ընդունումը հետապնդում է երկու հիմնական նպատակ, որոնք անմիջականորեն առնչվում են տնտեսական անվտանգության խնդիրների հետ.

1. Բարձր գնաճի նվազեցում,

2. Տնտեսական ինտեգրում:

Սակայն այդ նպատակներին հասնելու ընթացքում խիստ սահմանափակումներ են առաջանում դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների համար ՀՆԱ - ի և զբաղվածության կարճաժամկետ խնդիրների լուծման առումով: Լողացող փոխարժեքի համեմատությամբ ամրագրված փոխարժեքի առավելությունը գնաճի սպասումները անմիջականորեն չեզոքացնելն է, որը չափազանց կարևոր է անցումային տնտեսությամբ երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանը, որտեղ տնտեսական անվտանգության ապահովումը դառնում է ազգային անվտանգության պայմաններից մեկը:

Գնաճի նպատակադրման ռազմավարության սահմանումը հետևյալն է. Գնաճի նպատակադրումը դրամավարկային քաղաքականություն իրականացնելու ծրագիր է, որը բնութագրվում է գնաճի մեկ տարվա կամ որոշակի ժամանակահատվածի պաշտոնական ծրագրային ցուցանիշի ( կամ միջակայքի ) հրապարակային հայտարարմամբ, նշելով, որ ցածր և կայուն գնաճի ապահովումը դրամավարկային քաղաքականության առաջնային երկարաժամկետ նպատակն է:

Գնաճի նպատակադրման հաջորդ կարևոր հատկանիշը դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմնի կողմից ծրագրերի, խնդիրների, նպատակների, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու ուղիների հրապարակային դարձնելն է:

Ըստ մեկ այլ աղբյուրի՝ գնաճի նպատակադրումն իրենից ներկայացնում է գնաճի նպատակային ցուցանիշի սահմանում, գնաճի կանխատեսում նույն ժամանակահատվածի համար, այնուհետև նպատակաուղղված քաղաքականության իրականացում՝ նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղումը վերացնելու համար:

Ընդ որում, գնաճի կանխատեսված մակարդակը ԿԲ - ի համար դառնում է միջանկյալ նպատակ, քանի որ այն կառավարելի է ԿԲ - ի կողմից, հասկանալի և չափելի է հասարակության համար և հստակեցնում է դրամավարկային քաղաքականության ուղղությունները: Իսկ գնաճի կանխատեսված մակարդակի կառավարումը իրականացվում է գործառնական նպատակի միջոցով:

Գնաճի նպատակադրման ռազմավարությունը ոչ թե պարզապես գնաճի նպատակային ցուցանիշի ապահովում է, այլ որոշակի կանոնների վրա հիմնված դրամավարկային քաղաքականության մոտեցում՝ բարձր թափանցիկությամբ և հաշվետվելիությամբ: Այս ռազմավարության ընդունումը, ըստ էության, կանոնի ընդունում. պետք է հասնել գնաճի նպատակային ցուցանիշին և նվազեցնել բարձր գնաճի սպասումները:

Երբ գնաճն իր կայուն միջավայրում չէ, ինչպես դա եղել է զարգացող շուկայական տնտեսություններում գնաճի նպատակադրման ռազմավարություն որդեգրելու ժամանակ, գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելը, ինչպես նաև գնաճի նվազեցման ուղին և արագությունը որոշելը քաղաքականության ամենաէական հարցերն են: Գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելու կարողությունը կենտրոնական բանկի անկախության էական տարրն է: Մյուս կողմից, ակներև է, որ կառավարության համար շահավետ է, երբ գնաճի ցուցանիշը նպատակադրվում է բացահայտորեն, ինչն ըստ էության ավելի հեշտ է անել համատեղ ջանքերով՝ խրախուսելով հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների համադրումը կամ փորձելով բացառել այդ երկու քաղաքականությունների միջև հնարավոր հակասությունները: Բացի այդ, գնաճի նպատակային ցուցանիշ սահմանելու գործում կառավարության մասնակցությունը դրամավարկային քաղաքականությանը հաղորդում է ժողովրդավարական օրինականության

տարր, ինչը կարևոր հանգամանք է հանրային օժանդակությունը վայելելու տեսանկյունից:

ՀՀ - ում դրամավարկային քաղաքականությունը իրականացվում է ԿԲ - ի կողմից: Նրա կողմից է կարգավորվում տնտեսության մեջ փողի առաջարկը: Այստեղ կարևոր է դիտարկել, թե երկրի ԿԲ - ն ինչ գործիքներ և լծակներ է օգտագործում դրամավարկային քաղաքականությունն իրականացնելու համար:

Տնտեսության մեջ դրամական ծավալի կարգավորման համար ԿԲ - ն կարող է կիրառել ինչպես անուղղակի, այնպես էլ ուղղակի գործիքներ:

Ուղղակի գործիքներն են՝

1. Վարկավորման սահմանները,
2. Տոկոսադրույքի ուղղակի կարգավորումը:

Ժամանակակից պայմաններում զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում օգտագործվում են երեք հիմնական անուղղակի գործիքներ, որոնց միջոցով ԿԲ - ն իրականացնում է դրամավարկային ոլորտի կարգավորում: Այդ գործիքներն են՝

1. Բաց շուկայում իրականացվող գործառույթները,
2. Անվանական ( վերաֆինանսավորման ) դրույքները,
3. Պարտադիր պահուստային նորման:

Բաց շուկայական գործառնությունները դրամավարկային ամենակարևոր գործիքն են, քանի որ դրանք տոկոսադրույքների և փողի բազայի որոշիչներն են: Դրանք նաև փողի առաջարկի տատանումների հիմնական աղբյուրն են: Բաց շուկայական գնումները ընդլայնում են դրամական բազան և պահուստները, հետևաբար նաև ավելացնում փողի առաջարկն ու նվազեցնում կարճաժամկետ տոկոսադրույքները: Բաց շուկայական վաճառքը փոքրացնում է դրամական բազան և պահուստները՝ նվազեցնելով փողի առաջարկն ու բարձրացնելով կարճաժամկետ տոկոսադրույքները:

ԿԲ - ի կողմից պարտատոմսերի գնումը բերում է առևտրային բանկերի պահուստների աճին, որը նաև մեծացնում է դրամական բազան: Ստանալով հավելյալ ռեսուրսներ՝ առևտրային բանկերն ավելի շատ վարկեր կտրամադրեն, որը կհանգեցնի վարկային էմիսիային: Եթե ԿԲ - ը կատարում է հակառակ գործընթացը, այսինքն վաճառում է պարտատոմսերը, ապա տնտեսության մեջ տեղի է ունենում դրամական հոսք դեպի ԿԲ, և դրամական զանգվածի քանակությունը իջնում է:

Մշտական հնարավորության գործիքները ձևավորում են դրամավարկային քաղաքականություն գործիքների տոկոսադրույքների վերին և ստորին սահմանը և դրանով իսկ շուկան ապահովագրում տոկոսադրույքների կտրուկ տատանումներից:

Դրամաշրջանառության գործընթացի վրա առավել ուժեղ ազդեցություն է ունենում վերաֆինանսավորման քաղաքականությունը: Դիսկոնտային քաղաքականությունը դրամավարկային կարգավորման կարևոր գործիք է, որի հիմնական ուղղությունները մշակվում են տվյալ երկրի ԿԲ - ի կողմից: Վերջինիս կողմից դիսկոնտային քաղաքականությունը իրականացվում է պաշտոնական տոկոսադրույքների երկու հիմնական տեսակների սահմանման և վերանայման միջոցով.

1. վերահաշվառման տոկոսադրույքները՝ պետական արժեթղթերի վերահավառման նպատակով:
2. բանկային տոկոսի հաշվարկային դրույքները՝ Կառավարության և բանկային հասարակությունների վարկավորման նպատակով:

Դրույքը, որով ԿԲ - ը առևտրային բանկերին տրամադրում է վարկեր, անվանում են անվանական դրույք կամ վերաֆինանսավորման դրույք:

Երբ բանկերը վարկ են վերցնում ԿԲ - ից, առաջարկվող վարկի պայմանները ավելի շահեկան պետք է լինեն, քան միջբանկային շուկայում,

քանի որ ԿԲ - ից փոխառությունները փոխարինում են միջբանկային փոխառություններին: Մնացած բոլոր գործոնները անփոփոխ մնալու պարագայում ( ներառյալ՝ ԿԲ - ի կողմից սահմանված տոկոսադրույքները ), միջբանկային շուկայի տոկոսադրույքները բարձրանալու դեպքում, բանկերը ավելի մեծ ցանկություն կունենան վարկ վերցնելու ԿԲ - ից: Արդյունքում ԿԲ - ի կողմից իրացվելիության ներարկումները ( վարկավորումը ) կաճի: Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը վերահաշվառման տոկոսադրույքից բարձր է, քանի որ բանկերի վարկավորման գործառնությունները ավելի թանկ են գնահատվում, քան առևտրա - կոմիսիոն գործառնությունները: Պետական քաղաքականության իրականացման դեպքում ԿԲ - ները օգտագործում են ոչ միայն տնտեսական, այլև վարչական գործիքներ, ինչպես օրինակ առևտրային և մասնագիտացված բանկերի շուկայական տոկոսադրույքների նկատմամբ ուղղակի վերահսկողություն, վարկային մարժայի սահմանափակում, վարկերի առանձին տեսակների տոկոսադրույքների վերին սահմանների հաստատում: Մշտական հնարավորության վարկերի աճը մեծացնում է առաջարկվող պահուստների քանակը:

Դրա հետևանքով ավելանում է փողի բազան: Անվանական դրույքի բարձրացումը հանգեցնում է նրան, որ առևտրային բանկերը կձգտեն ավելի քիչ վարկեր վերցնել, և դրա հետևանքով նրանք ավելի քիչ վարկ կտրամադրեն, ինչը կիջեցնի տնտեսության մեջ դրամական զանգվածի քանակությունը կնվազեցնի տնտեսական ակտիվությունը, կիջեցնի աճի տեմպերը, որոնք հանդիսանում են սպառնալիքներ տնտեսական անվտանգության ապահովման գործում: Իսկ անվանական դրույքի իջեցումը կհանգեցնի հակառակ պրոցեսին:

Պարտադիր պահուստները ավանդների որոշակի մասն են, որոնք առևտրային բանկերը պահում են ԿԲ - ի կողմից հատկացված հատուկ

հաշվեհամարներում, և դրանք չեն կարող օգտագործվել վարկ տրամադրելու, ինչպես նաև այլ ակտիվային գործառույթների համար: Առաջին անգամ պարտադիր պահուստների համակարգը կիրառվել է 1913 թվականին ԱՄՆ - ում՝ ֆեդերալ ռեզերվային համակարգի ստեղծման հետ զուգընթաց: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո այս համակարգը կիրառություն գտավ նաև շատ այլ երկրների բանկային ոլորտներում: Պարտադիր պահուստն իրենից ներկայացնում է առևտրային բանկերի ռեսուրսների այն մինիմալ մակարդակը, որն անհրաժեշտ է երկու ֆունկցիաներ իրականացնելու համար: Առաջինը պետք է լուծի իրացվելիության խնդիրը, քանի որ ցանկացած ժամանակ ավանդատուն կարող է հետ պահանջել իր գումարը, և բանկը պետք է պատրաստ լինի դրան: Սա անհրաժեշտ է նաև այլ բանկերի հետ գործառույթներ իրականացնելու համար, որի ընթացքում մի բանկի պարտադիր պահուստային հաշվից գումարը տեղափոխվում է մյուսի հաշվին: Երկրորդ հերթին դա ԿԲ - ի ձեռքին մի լծակ է, որի միջոցով կարգավորվում է դրամական զանգվածը: Այս պահուստների փոփոխությունն ուղղակիորեն ազդում է առևտրային բանկերի վրա: Պարտադիր պահուստավորման դրույքաչափի ավելացումը նաև ավելացնում է պահուստների նկատմամբ պահանջարկը և նպաստում միջբանկային տոկոսադրույքի աճին: Դրա հետևանքով առաջանում է փողի առաջարկի նվազեցում: Հակառակ դեպքում տեղի է ունենում փողի առաջարկի աճ և միջբանկային տոկոսադրույքների նվազեցում:

## 4.2 Պետական պարտքը և տնտեսական անվտանգությունը

Պետական պարտքի կառավարման վերաբերյալ Հայաստանում դեռևս չունենք անհրաժեշտ մեթոդաբանություն: Պետական պարտքը հանդիսանում է տնտեսական անվտանգության մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ:

Վերջին տարիներին ՀՀ պետական պարտքը կտրուկ ավելացել է 2008 թվականի վերջում 584.6 միլիարդ դրամից 2013 թվականի վերջում հասնելով 1861.3 միլիարդ ՀՀ դրամի: ՀՀ կառավարությունը պնդում է, որ պետական պարտքը կայուն է և մտահոգության պատճառ չի կարող հանդիսանալ:

Պետական պարտքի կայունության գնահատման սովորական ցուցանիշները կարող են ճիշտ չգնահատել պարտքային բեռը, զգալի տարբերություններ գոյություն ունեն ՀՀ կառավարության ռազմավարական և մարտավարական փաստաթղթերում նշված նպատակների և առանձին տարիներին ընդունված որոշումների միջև, կտրուկ ավելացել են պետական պարտքի դիմաց վճարվող տոկոսների ( 2008 թվականին 11 միլիարդ դրամից 2013 թվականին հասնելով 46.5 միլիարդ դրամի ) և արտաքին պարտքի գծով մայր գումարիների ( 2005 – 2008 թվականներին տարեկան 15 - 16 միլիոն ԱՄՆ դոլարից 2013 թվականին արդեն գերազանցել է 124 միլիոն ԱՄՆ դոլարը ) մեծությունը, կառավարությունը մեծ ծավալներով պարտք է ներգրավում այն պայմաններում, երբ գանձապետական միասնական հաշվում առկա են մի քանի տասնյակ միլիարդ, իսկ որոշ տարիների նաև հարյուրդ միլիարդ և ավելի դրամ, պետական պարտք ներգրավելու իրավունք ունեն մի շարք պետական մարմիններ և պաշտոնյաներ, ներքին շուկայից միջոցներ ներգրավելու արդյունքում դուրսմղման էֆֆեկտ չի արձանագրվում:

Պարտք ներգրավելու նպատակներն են՝

- Միջոցների ներգրավման յուրաքանչյուր գործարքի ժամանակ համապատասխան փաստաթղթերում նշել պետական պարտքի ներգրավման

նպատակը:

- Պետական պարտքի ներգրավման նպատակների թվում նշել նաև կոնկրետ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար միջոցներ ներգրավելու հնարավորության մասին:
- Օրենսդրորեն կանոնակարգել պետական բյուջեից վարկերի տրամարդման գործընթացը:
- Օրենսդրորեն սահմանել, որ որպես պարտք ներգրաված միջոցների ծավալը չի կարող գերազանցել պետության կողմից կատարվող ներդրումային ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ ծավալը:

Պետական պարտքի կառավարման բնագավառում քաղաքական որոշումները այդ որոշումներից տարանջատելու անհրաժեշտությունը՝

- Պետական ծրագրերի ֆինանսավորման համար անհրաժեշտ վարկային միջոցների ներգրավումից առաջ խորհրդարան ներկայացնել կարիքների գնահատման վերլուծություններ, ներկայացնելով նաև ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կառավարչական կարողությունների առկայության վերաբերյալ վերլուծություն:
- Քննարկել պետական պարտքի կառավարման գործառույթը քաղաքական ազդեցությունից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ օրենսդրական և կառուցվածքային փոփոխություններ կատարելու հարցը:
- Անհրաժեշտ է մինչև տարբեր ոլորտներում ներդրումային և կարողությունների զարգացման նպատակով տարբեր աղբյուրներից միջոցների ներգրավման վերաբերյալ որոշումների կայացումը կատարվող կարիքների գնահատման վերլուծությունները դարձնել հանրային քննարկման առարկա, հանրությանը տեղեկատվություն տալով այն մասին, թե ինչքան միջոցներ են տվյալ ոլորտ ներգրավվել մինչև հիմա և ինչ արդյունքներ են դրանք ապահովել և ինչ արդյունքներ են ապահովելու նոր ներգրավվող միջոցներով:

▪ Լրացուցիչ հետազոտություններ են հարկավոր ՀՀ կառավարության կողմից պետական պարտքի հետ կապված որոշումների հետևողականությունը և որդեգրած ռազմավարությանը դրանց համապատասխանությունը պարզելու համար:

Արտաքին պետական պարտք

| | 2011(մլն. դոլլար) | 2012 (մլն. դոլլար) | 2013 (մլն. դոլլար) |
|---|---|---|---|
| Արտաքին պետական պարտքը, ընդամենը, այդ թվում՝ | 3 569. 299 | 3 739. 090 | 3 899. 063 |
| ՀՀ կառավարության պարտք | 2 951. 968 | 3 144. 476 | 3 390. 794 |
| ՀՀ կենտրոնական բանկի պարտք | 617.331 | 594.614 | 508.269 |

## 4.3 Հարկերը որպես պետության ֆինանսական և տնտեսական անվտանգության գործոններ

Հարկերը և նրանց տեսակները պատմականորեն առաջացել են դասակարգերի և պետության ծագման հետ և միշտ հանդիսացել են պետական բյուջեի եկամտի հիմնական աղբյուրը: Գոյություն են ունեցել տարբեր տեսակի հարկեր: Շուկայական հարաբերություններին զուգընթաց տիրապետող դարձավ հարկերի գանձման դրամական ձևը: Սահմանվեցին հարկեր՝ ծխախոտի,

սպիրտային խմիչքների, շաքարի, աղի և այլ ապրանքների համար: Կիրառության մեջ մտան գույքահարկը, ակցիզային հարկը, ավելացված արժեքի հարկը: Ավելացված արժեքի հարկը լայն տարածում ստացավ աշխարհում, թեպետ մի քանի երկրներում, այդ թվում՝ ԱՄՆ - ում այն չի կիրառվում: Հարկերի դասակարգումը, որպես ուղղակի և անուղղակի հարկերի, առաջին անգամ տվել է անգլիացի փիլիսոփա Ջոն Լոկը:

Հարկային համակարգը իրենից ներկայացնում է պետությունում գանձվող հարկերի, տուրքերի, մաքսերի և այլ վճարումների կազմակերպման ձևերի և մեթոդների ամբողջությունը: Հարկային համակարգի տարրերն են հանդիսանում հարկային քաղաքականությունը, հարկային օրենքները, հարկային մարմինների կառուցվածքը : Տարբեր պետություններում կիրառվում են տարբեր տեսակի հարկեր և հարկային տարբեր քաղաքականություն, որոնցից էլ բխում է տարբեր պետություններին բնորոշ հարկային ստուգումների կարգը: Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից ( այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից ), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում :

Յուրաքանչյուր պետություն ինքն է մշակում իր հարկային քաղաքականությունը: ՀՀ - ում գործում է միասնական հարկային համակարգ: Հարկերը գանձվում են ՀՀ պետական և ( կամ ) համայնքների բյուջեներ: Համաձայն ՀՀ Սահմանադրության 45 - րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է ժամանակին վճարել հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները: Հարկ վճարողների հաշվառման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, իսկ հաշվառումն իրականացնում է հարկային մարմինը: ՀՀ

Հարկային մարմիններն են՝ վերադաս հարկային մարմինը և հարկային տեսչությունը:

Հարկային տեսչությունները ստեղծում, վերակազմավորում և լուծարում է ՀՀ կառավարությունը: Անկախության հռչակումից հետո անհրաժեշտություն առաջացավ արմատական բարեփոխումներ կատարել ՀՀ հարկային համակարգում: 1992 – 1996 թվականներին ընթացքում ՀՀ - ում սկսում են կարգավորվել հարկային հարաբերությունները, իսկ 1997 թվականից ուժի մեջ են մտնում տարբեր հարկատեսակների գծով օրենքները:

Հարկային համակարգի բնորոշ տարրերն են՝

▪

Հարկման սուբյեկտը իրավաբանական կամ ֆիզիկական անձն է, որը օրենքով սահմանված կարգով վճարում է հարկը:

▪

Հարկվող օբյեկտը եկամուտն է, գույքը, շահույթը, ապրանքները և այլն, որի նկատմամբ հաշվարկվում է հարկը:

▪

Հարկման բազան կամ միավորն այն արժեքային մեծությունն է, որի նկատմամբ որոշակի դրույքաչափով հաշվարկվում է հարկը:

Հարկի դրույքաչափը հարկման բազայի այն մասն է, որը հարկատուն պարտավոր է վճարել տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ գումարով:

Հարկային արտոնությունը հարկերից մասնակի կամ լրիվ ազատվելն է կամ՝

ա) հարկվող օբյեկտի նվազեցում,

բ) հարկի դրույքաչափի նվազեցում,

գ) հարկի հաշվարկային ժամկետի հետաձգում,

դ) հարկի վճարման ժամկետի հետաձգում հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող իրավաբանական անձն է, անհատ ձեռնարկատերը, նոտարը, հիմնարկը, ՏԻՄ - երը, որոնց վրա դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս նրանց եկամուտներից հարկերը հաշվարկելու, գանձելու և ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարելու պարտականություն:

Հարկերը լինում են երկու տեսակ՝ ուղղակի, որոնք հարկվում են բնակչության բոլոր խավերի եկամուտներից և տնօրինվող օբյեկտներից ( շահութահարկ, եկամտային հարկ, գույքահարկ, հողի հարկ ): Անուղղակի հարկերը սահմանվում են ապրանքների և ծառայությունների գների նկատմամբ՝ սակագների բարձրացման միջոցով, վճարվում են վերջնական սպառողի կողմից ( ակցիզային հարկ, ԱԱՀ ): Ըստ հարկման բնույթի հարկի դրույքաչափերը լինում են՝ պրոգրեսիվ, երբ եկամտի աճին զուգընթաց մեծանում է հարկի դրույքաչափը ( եկամտային հարկ ), ռեգրեսիվ, երբ եկամտի աճին զուգընթաց նվազում է հարկի դրույքաչափը և համամասնական՝ անկախ եկամտի աճից հարկի դրույքաչափը մնում է նույնը ( շահութահարկ, ԱԱՀ ):

Հարկային բեռը բնակչության մեկ շնչի հաշվով հարկի գումարի հարաբերությունն է բնակչության վճարունակությանը:

Որքան բարձր է բնակչության վճարունակությունը, այնքան ցածր է հարկային բեռը: Որքան բարձր է բնակչության մեկ շնչի հաշվով հարկի միջին գումարը, այնքան բարձր է հարկային բեռը: Հարկային բարձր բեռը նպաստում է, որ հարկատուն խուսափի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել կամ նախընտրի ավելի շատ աշխատել տնային տնտեսությունում: Այս դեպքում կառաջանա լրացուցիչ հարկային բեռ, քանի որ հարկատուի ստանալիք եկամուտները կորչում են՝ առաջացնելով պետական բյուջե փոխանցվող եկամուտների նվազեցում: Հարկային բեռի փոքրացումը՝ բնակչության

վճարունակության բարձրացման հաշվին, նույնպես կխթանի եկամուտների աճին: Հարկային քաղաքականությունը պետք է խթանի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, կանխի գների կտրուկ բարձրացումը, բնակչության սոցիալական շերտավորման խորացումը: Այս առումով կարևորվում է պետության խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը: Հարկերը և տուրքերը հանդիսանում են պետական բյուջեի եկամտի հիմնական աղբյուրը: Համաձայն պետական բյուջեի մասին օրենքների՝ ընդունված 2010 – 2013 թվականներին նախատեսվել է պետական բյուջեի եկամուտների աճ՝ ըստ տարիների: 2013 թվականին պետական բյուջեի եկամուտները կազմել են 1031.5 մլրդ դրամ, 120 մլրդ դրամով ավելի, քան 2012 թվականին, նախատեսվել է հարկային եկամուտների աճ՝ 260.7 միլիարդ դրամ, 2012 թվականի նույն ցուցանիշի համեմատ, ավելացել են նաև պետական բյուջեի ծախսերը՝ 2013 թվականին կազմելով 1151.3 մլրդ դրամ, 107.2 իլիարդ դրամով ավելի, քան 2012 թվականին: Արդյունքում նկատվում է պետական բյուջեի դեֆիցիտի տարեցտարի նվազեցում: 2013 թվականին նախատեսված հարկային եկամուտները կազմում են պետական բյուջեի եկամուտների 96 % - ը նախորդ տարվա 80 % - ի փոխարեն: Նախորդ տարիներին հարկային եկամուտների մեջ մեծ տեսակարար կշիռ էին կազմում անուղղակի հարկերը: ՀՀ հարկային համակարգում նկատելի բարեփոխումներ են կատարվել: Մեծ աշխատանքներ են տարվել հարկ վճարողների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: Միջոցառումներ են ձեռնարկվել հարկային համակարգի թափանցիկության աստիճանի բարձրացման ուղղությամբ: 2011 թվականին ավելացել են հարկ վճարողների սպասարկման կենտրոնների թիվը՝ կազմելով 9 - ը, որից 6 – ը Երևանում, 3 - ը՝ մարզերում:

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերը կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

▪

Անուղղակի հարկեր

▪

Ավելացված արժեքի հարկ

▪

Ակցիզային հարկ

▪

Ուղղակի հարկեր

▪

Շահութահարկ ( անձնական )

▪

Եկամտային հարկ (անձնական )

▪

Գույքահարկ ( իրական կամ գույքային )

▪

Հողի հարկ ( իրական կամ գույքային )

Ընդհանրապես կան հարկերի դասակարգման այլ չափանիշներ.

▪

ռեպարտիցիոն ( հավասարաչափ բոլոր հարկատուների համար ) և քանակական ( բաժնային, քվոտային, որը հաշվի է առնում վճարունակությունը )

▪

ամրագրված և կարգավորիչ հարկեր

▪

համապետական ( գանձվում են կենտրոնական կառավարման մարմինների կողմից և մուտք են գործում պետական բյուջե ) և տեղական հարկեր ( անշարժ գույքի հարկը, տրանսպորտային հարկը և այլն, որոնք գանձվում են

տեղական մարմինների կողմից ), առանձնացնում են նաև ռեգիոնալ հարկեր:

▪

ընդհանուր նշանակության ( ներառվում են երկրի պետական բյուջե ) և նպատակային նշանակության հարկեր ( ներառվում են հատուկ ֆոնդեր )

▪

կանոնավոր և միանգամյա հարկեր:

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 |
|---|---|---|---|---|---|
| Հարկեր և տուրքեր | 642 824.3 | 718 348.3 | 796 960.4 | 898 415.9 | 1 022 052.9 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | 254 158 | 301 724 | | | |
| ԱՀ | .1 | .5 | | | |
| 2. | 80 800 | 77 813. | | | |
| ահութահարկ | .5 | 8 | | | |
| 3. | 60 | 73 939. | | | |
| կամտահարկ | 204.7 | 8 | | | |
| 4. | 42 | 48 140. | | | |
| կցիզային հարկ | 767.1 | 5 | | | |
| 5. | 10 | 11 262. | | | |
| ույքահարկ | 263.4 | 0 | | | |
| 6. | 4 974.3 | 4 585.7 | | | |
| ողի հարկ | 25 111.3 | 29 366. | | | |
| 7. | 23 | 7 | | | |
| աքսատուրք | 815.6 | 21 976. | | | |
| 8. | 6 120.5 | 4 | | | |
| աստատված | | 9 102.5 | | | |
| վճարներ | | -50.4 | | | |
| 9. | | - | | | |
| նական | | - | | | |
| պաշարների | | 12 039. | | | |
| օգտագործման և | | 4 | | | |
| շրջակա | 330.4 | 23 111.5 | | | |
| միջավայրի | | | | | |
| պահպանման | - | | | | |
| համար վճարներ | - | | | | |
| 10. | | 105 3 | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| արզեցված հարկ<br>11.<br>ռջանառության<br>հարկ<br>12.<br>կամտային հարկ<br>13.<br>յլ հարկային<br>եկամուտներ<br>14.<br>ուրքեր<br>15.<br>արտադիր<br>սոցիալական<br>ապահովության<br>վճարներ | 9<br>998.3<br><br>21<br>377.1<br><br>102<br>903.1 | 35.9 | | | |

## 4.4 Ստաբիլիզացիոն ֆոնդի դերը տնտեսական անվտանգության ապահովման գործում

Ժամանակակից տնտեսական համակարգը կարելի է վերագրել անկայուն տնտեսությանը: Սա էլ իր հերթին պայմանավորում է պետության արդյունավետ ստրատեգիայի անհրաժեշտությունը՝ ուղղված տնտեսական կայունացմանը:

Տնտեսական կայունացման գործում հիմնական դերը պատկանում է կայունացման ֆոնդին:

Կայունացման ֆոնդը հատուկ պետական ֆոնդ է, որը ստեղծվել է և օգտագործվում է տնտեսության կայունացման նպատակով: Այն պետական բյուջեի միջոցների մի մասն է կազմում:

Կայունացման ֆոնդի օգտագործման նպատակը պետական բյուջեի հավասարակշռության պահպանումն է՝ ճեղքվածքների կամ չպլանավորված ծախսերի պայմաններում:

Այս թեման ժամանակակից է, քանի որ քննարկումը այն մասին, թե ինչպես օգտագործել կայունացման ֆոնդը, ստացել է շատ մեծ տարածվածություն աշխարհի բոլոր երկրներում:

Կայունացման ֆոնդի ստեղծման աղբյուր են հանդիսանում պետական բյուջեի լրացուցիչ եկամուտները, ինչպես նաև ֆինանսական տարվա սկզբի միջոցների մնացորդները:

Կայունացման ֆոնդը կատարում է հետևյալ ֆունկցիաները.

1. հանդիսանում է ներկառուցված կայունարար,
2. ապահովում է պետության լրցուցիչ ֆինանսների կայունություն,
3. կարող է ծառայել որպես ֆինանսավորման աղբյուր այն ներդրումային ծրագրերի համար, որոնք հետագայում ապահովելու են բյուջեից ծախսերի կրճատումը:

Կայունացման ֆոնդը խթանում է երկրի տնտեսական զարգացման կայունությունը, հանդիսանում է ավելցուկային իրացվելիության հիմնական գործիքներից մեկը:

Ֆոնդի միջոցները կարող են օգտագործվել դեֆիցիտի ծածկման համար:

Համաձայն հաստատված կարգի, ֆոնդի միջոցների կառավարումը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

1. օտարերկրյա պետությունների պարտքերի ձեռքբերման ճանապարհով,
2. օտարերկրյա փոխարժեքի միջոցով:

Անհրաժեշտ է կատարել հստակ տարբերակում կայունացման ֆոնդի և դրա օգտագործման միջև: Ֆոնդի առաքելության հիման վրա՝ այն է՝ ծառայել որպես երկրի ռազմավարական ֆինանսական պահուստ, կառավարման հիմնական խնդիր է համարվում իր միջոցների պաշտպանությունը գնանկումից և իրենց բարձր իրացվելիության պահպանումը: Բարձր եկամուտների ապահովումը տեղաբաշխումից, կապված է շատ մեծ ռիսկերի հետ, որը հակասում է ֆոնդի ֆունկցիաներին:

## Եզրակացություն և առաջարկություններ

Տնտեսական անվտանգություն հասկացությունը կառավարման և կարգավորման գործընթաց է ՙ ներմուծում ՚ տնտեսական ցուցանիշների և չափանիշների համակարգի միջոցով:

Անվտանգության հասկացությունը որոշակի զարգացում է ապրել, սակայն հիմքում անվտանգության երևույթի ընկալումը մնում է նույնը՝ սպառնալիքի, չարիքի և վտանգի բացակայությունը:

Երկրների միջև փոխկապվածության աճն իրար է կապում ազգային տնտեսական անվտանգության և տարածաշրջանային ու գլոբալ խնդիրների լուծման շահերը:

Ազգային անվտանգության սուբյեկտ է ողջ ազգը՝ իր բոլոր ներքին և արտաքին սուբյեկտներով, սակայն դրանցից հիմնականները ազգային այն հարստություններն են, որոնք ներգավված են ազգային անվտանգության համակարգում: Անվտանգության խնդրի բարդությունից կախված ցանկալի է բոլոր հաստատությունների ներգրավվածությունը ազգային անվտանգության համակարգում:

Համաձայն << ՀՀ անվտանգության մասին >> օրենքի նախագծի՝ անվտանգության օբյեկտ են համարվում անձը, նրա իրավունքները ու ազատությունները, հասարակությունը, նրա հոգևոր և նյութական արժեքները, պետությունը, նրա սահմանադրական կարգը, իշխանությունը և տարածքային ամբողջականությունը:

Անվտանգության ապահովման սկզբունքներն են՝ օրինականությունը, անձի, հասարակության և պետության անվտանգության հաշվեկշռվածության ապահովումը, անձի, հասարակության և պետության անվտանգության փոխադարձ պատասխանատվությունը, միջազգային անվտանգության

համակարգերի հետ համագործակցությունը:

Անհրաժեշտ է ստեղծել մի համակարգ, երբ ցանկացած հարված պետությանը առաջացնի ոչ միայն ՀՀ - ի, Սփյուռքի ու միջազգային կազմակերպությունների հակադարձությունը, այլև ապակայունացնի և ապակազմակերպի զարգացման ամբողջ համակարգը՝ մեր հարևան երկրների համար ստեղծելով կենսական սպառնալիքներ:

Պետության կողմից տնտեսական անվտանգության ապահովման գործառույթի իրականացման համար կարևորագույն գործիքներ են հանդիսանում տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգի կազմավորումը և դրանց սահմանային արժեքների որոշումը:

Անվտանգության գնահատման ժամանակ կարևոր են ինչպես որակական, այնպես էլ քանակական չափանիշները:

Հայաստանը, որպես վարկեր ստացող երկիր, ունի որոշակի խնդիրներ՝ կապված կուտակված արտաքին պարտքի հետ:

Տնտեսության մրցակցային հնարավորությունների անբավարար վիճակը, արտաքին օգնության անհրաժեշտությունը, տնտեսական գործունեության մի շարք բնագավառների մենաշնորհացումը, մեկ շնչի հաշվով եկամուտների ցածր մակարդակը թույլ չեն տալիս տնտեսության արագ վերականգնման համար օգտագործել բոլոր հնարավորությունները:

ՀՀ տնտեսությունում՝ բարեփոխումների փուլում առաջացանում են ներքին և արտաքին սպառնալիքներ: Հանրապետության համար առավել վտանգավոր են ներքին սպառնալիքները: Արտաքին սպառնալիքների մի շարք աղբյուրներ առաջանում են ներքին պատճառներից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համար ամենաէական սպառնալիքներից են հասարակության գույքային անհավասարության և շերտավորման ուժեղացումը, գործազրկության

աճը, աշխատավարձի ցածր մակարդակը և այլն:

Տնտեսական անվտանգության սպառնալիքների մեջ առանձնանում են ստվերային տնտեսությունը և կոռուպցիան՝ իրենց քաղաքական, սոցիալական և տնտեսական լուրջ հետևանքներով:

Ըստ բարեկեցության մակարդակի երկրի բնակչությունը բաժանվում է երեք խմբի՝ ոչ աղքատ, աղքատ և շատ աղքատ: Շատ աղքատ բնակչության մակարդակը նվազում է արագ տեմպերով:

Աղքատության տեսակետից առավել խոցելի խմբեր են բազմանդամ, անչափահաս երեխա ունեցող և կնոջ գլխավորությամբ ընտանիքները:

Մեր պետությունը պետք է հետևողական լինի բնակչության պարենային անվտանգության ապահովման գործում: Ըստ ՙ Պարենային անվտանգության մասին ՚ ՀՀ օրենքի՝ կառավարությունը, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, երաշխավորում է սնվելու ֆիզիոլոգիական նորմորի մակարդակով քաղաքացիների լիարժեք սնման և սովից զերծ լինելու իրավունքը:

Անվտանգության,այդ թվում ՝ տնտեսական սպառնալիքների դեմ պայքարելու համար անհրաժեշխտ է ոչմիայն խիստ մասնագիտական և քաղաքական միջոցառումների իրականացում. . ,այլև հասարակության մեջ տիրող սոցիալ - հոգեբանական վիճակի փոփոխում և վերակառուցում:

# Գրականության ցանկ


1. ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն
2. ՀՀ 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
3. Մարկոսյան ‘‘Տնտեսական անվտանգություն’’
4. Ա. Աղայան ‘‘ Ազգային անվտանգություն’’
5. Թ. Մանասերյան- Տնտեսական անվտանգության ռազմավարության ուրվագծեր
6. Сергей Глазьев-"Размышления о состоянии экономической безопасности"
7. Сергей Глазьев- "О неотложных мерах по укреплению экономической безопасности"
8. Е. А. Олейниковна- "Экономическая и национальная безопасность"
9. В. К. Сенчагов "Экономическая безопасность"